

## Խմբագրական

### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԴԱՏԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ



Այս տարուան Ապրիլ 24-ը եւ անոր յաւերժախօս խորհուրդն ու պատգամը կը զուգահիւսին ցաւալիօրէն՝ ամբողջ աշխարհը ահ ու սարսափի մատնած թագաժահրի կամ գորոնավիրուսի համաճարակին...:

Հոգեւին միայն պիտի կարենանք խոնարհիլ մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակին առջեւ եւ վերանորոգել մեր սրբազան ուխտը՝ հաւատարիմ մնալու իրենց կտակին:

Այս առիթով, սակայն, պիտի ընենք կարգ մը խորհրդածութիւններ ինչ կը վերաբերի Հայ Դատի Պահանջատիրութեան մեր երթին...

-Յեղասպանութենէն 105 տարիներ ետք, տակաւին մենք խրուած կը մնանք անոր ճանաչման գործընթացներու ճահիճին մէջ: Յեղասպանութեան ճանաչումներ՝ տարբեր երկիրներու խորհրդարաններու, պետական-քաղաքական մարմիններու կամ կարեւոր անձնաւորութեանց կողմէ, որոնք կը կրկնեն պատմական դէպքի մը իրաւացիութիւնը եւ կը դառնան տեսակ մը քնաբեր օրօրներ, բաւարարուելու այդքանով եւ մոռնալու ԷԱԿԱՆԸ՝ հայրենախլման եւ հայրենահանման կարեւորագոյն իրաւագրկումը: Ի դէպ, նոյն նպատակին կը ծառայէր՝ թուրք մտաւորականներու ձեռնարկած՝ «Մենք ներողութիւն կը խնդրենք» լոզունգով արշաւը, որ դարձեալ քնաբեր դեղահատ մըն էր՝ մեր հողագրկեալ եւ իրաւագրկեալ հանգամանքը մոռցնել տալու միտող...: Յաւալիօրէն, նմանատիպ օրօրներ են՝ Հայկական Յեղասպանութեան ժխտումը քրէօրէն պատժելու գծով օրինագիծի մշակումները՝ աշխարհի տարբեր խորհրդարաններուն կողմէ, քանզի անոնք ո՛չ մէկ ձեւով կը պարտաւորեցնեն ցեղասպան Թուրքիան՝ պատժամիջոցներու թէ այլ եղանակներով, ընդունելու իր յանցագործութիւնը եւ պատասխանատուութիւն կրելու անոր համար...

Նման ճանաչումները արհամարհելով, Թուրքիան ցարդ կը ժխտէ իր գործադրած եղեռնագործութիւնն ու հայրենահանումը, անգամ մը եւս ցեղասպանութեան ենթարկելով տարագիր հայութիւնը:

-Պիտի ընդգծենք այստեղ որ Մեծ Թուրանի իրականացումը կը մնայ ըլլալ թուրքին մեծ երազը, թուրքը ըլլայ՝ սուլթանական, օսմանեան թէ հանրապետական, \$էսով թէ գլխարկով...: Յեղասպանութիւնը հիմա ալ կը շարունակուի Հայաստանի շրջափակումով, թուրք-ազերի



սերտագոյն գործակցութեան հայատեաց քաղաքականութեան նորանոր դրսեւորումներով եւ ծաւալողապաշտ քարոզչութեամբ: Նմանապէս՝ աւերումովն ու կործանումովը Արեւմտահայաստանի եւ Նախիջեանի տարածքին վրայ սփռուած մեր պատմամշակութային կրթողներուն, որոնք ցայտուն ապացոյցն են հայութեան հազարամեակներու գոյութեանը՝ այդ հողատարածքին վրայ:

-Քաղաքական պահանջատիրութիւնը պէտք է ընդգրկէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումներէն անդին եւ գերիվեր՝ բռնագրաւուած Արեւմտահայաստանի հողային իրաւապահանջութիւնը, մասնաւորապէս խելամտօրէն եւ դիւանագիտական ճիշդ լեզուով օգտագործելով Վուրո Ուիլսոնի Իրաւարար վճիռը, որուն հարիւրամեակն է այս տարի:

- Ըստ այդ իրաւարար վճիռին, որ ստորագրուեցաւ 22 Նոյեմբեր 1920-ին, Հայաստանի Հանրապետութեան տիտղոսն ու իրաւունքները կը ճանաչուէին՝ Նախկին Օսմանեան կայսրութեան Վանի, Պիթիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներուն վրայ՝ ընդհանուր առմամբ 103.599 քառակուսի քիլոմէթր: Իսկ այդ իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր է կատարման համար: Ան չունի ժամանակային սահմանափակում, եւ անոր կարգավիճակը կախում չունի վճիռին հետագայ ճակատագրէն:

-Տիւրք է նկատել, որ Պահանջատէր ըլլալու գիտակցութիւնն ու յանձնառութիւնը տակաւ կը խամրին՝ Սփիւռքի տարագիր հայութեան մօտ, Հայկական Յեղասպանութեան ճանաչումներու օրօրներով թէ այլապէս, երբ կը կարծուի թէ Հայաստանի պետութիւնն է, որ միակ իրաւատէրն ու պահանջատէրն է Հայ Դատին: Առանց ժխտած ըլլալու հայրենի պետութեան ստանձնելիք կարեւոր դերակատարութիւնը այս ուղղութեամբ, պիտի կարեւորութեամբ ընդգծենք, որ հայ Դատի Պահանջատիրութեան պայքարը առաջին հերթին պատասխանատուութիւնն է Սփիւռքի Տարագիր հայութեան, եւ այդ պատասխանատուութիւնը ամբողջովին հայրենի պետութեան վրայ բարդելը դասալքութեան համագործ է, ինչպէս նաեւ չլսել է՝ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու աղաղակը...:

-Այս գիտակցութիւնն ու յանձնառութիւնը զօրացնելու համար, անհրաժեշտ է մշակել Հայ Դատի ազգային-պետական միասնական ռազմավարութիւն: Իսկ հայրենագուրկ Սփիւռքը կ'ունենա՞յ այդ միասնական ռազմավարութիւնը, վեր ելլելով կուսակցական, հատուածական տարբեր նկատառումներէն եւ ցուցաբերելով ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ոգի եւ մտածողութիւն...Եւ կեանքի կոչելով՝ Տարագիր Արեւմտահայութեան Կեդրոնական Մարմինը, որուն տասնամեակներու բռուն ջատագովը եղած է Մեր Գասպար Տէրտէրեանը, հետեւողականօրէն խօսելով եւ գրելով՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Գորկրէսին գոյառման անյետաձգելի անհրաժեշտութեան մասին, եւ աւա՞ղ՝ ապարդիւն: Քանզի՝ մեր մօտ, հատուածամոլութիւնն ու մենատիրական փառատենչութիւնը տեղ չեն թողուր իրաւ, համահայկական ռազմավարական համագործակցութեան: Եւ կարելի է հարց տալ Փրոֆ. Երուանդ Հ. Քասունիին հետ միասին, թէ՛ «Դեռ որքա՞ն կարելի է շարունակել այս անտէր եւ ուղեկորոյս պահանջատիրութիւնը»:



-Իսկ եթէ լիարժէք ու լիիրաւ կերպով պիտի ստանձնենք Պահանջատիրութեան Դատն ու անոր հետապնդումը՝ որպէս արժանաւոր շառաւիղները ցեղասպանուած եւ հայրենահանուած արեւմտահայութեան, ապա առաջնահերթ պարտաւորութիւն է սերունդներու ազգային, հայեցի դաստիարակութիւնը՝ հայերէն լեզուամտածողութեամբ ( այս պարագային՝ արեւմտահայերէնով), քանզի լեզուասպանութիւնը հայասպանութիւնն է, կամ սպիտակ կամ անարիւն եղեռն: Իսկ լեզուին անփոխարինելի եւ հիմնական դարբնոցը ՀԱՅ ԴՊՐՈՑՆ է:

-Փերեզակային մօտեցումներով եւ հաշիւներով հայ դպրոց փակելը՝ տապանաբար դնել է հայ Պահանջատիրութեան, քանզի նոյնիսկ բռնագրաւեալ ՀՈՂԻՆ վերադարձը հայութեան պիտի արժեգրուէր, եթէ այդ հողին տերը հեռացած ըլլայ իր արմատներէն, իր բնիկ լեզուէն ու մշակոյթէն..., որոնք հաստատագիրն են իր ինքնութեան:

Հայկական Ցեղասպանութենէն եւ Հայրենահանումէն 105 տարիներ ետք, «Օդի, ջուրի, հացի նման» կենսական է ներկայիս կեանքի կոչել նոր ՉԱՐԹՕՆԸ մը՝ մեր Պահանջատիրութեան պայքարին եւ անոր ճիշդ հունաւորման գծով, յստակացնելով Սփիւռքի Տարագիր հայութեան եւ հայրենի պետութեան դերակատարութեանց ճիշդ բնութագրումը, եւ գործել ծրագրաւորուած, մէկը միւսին զօրավիգ ու զօրակից, մէկը միւսը համալրող ու ամբողջացնող: Սա նաեւ նոր խթան կրնայ ըլլալ՝ Սփիւռքի տարագիր հայութեան՝ հայ մնալու իր պայքարին մէջ:

Բայց մինչ այդ, Սփիւռքի ՏԱՐԱԳԻՐ հայութեան վերակազմակերպումը անյետաձգելի անհրաժեշտութիւն մըն է՝ ազգային-պետական միասնական ռազմավարութիւն մշակելու ուղղութեամբ: Ո՞վ է վերջապէս այն Կառոյցը թէ Մարմինը, որ լիազօրուած է խօսելու համայն Տարագիր Սփիւռքին անունով եւ հաշուետու է անոր:

Որքա՞ն ուշացած ենք արդէն....


ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Յօդուածներ

### Վուդրօ Վիլսոնի Իրաւարար վճիռը

### Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերեալ

Արա Պապեան, Երեւան, 14 Փետրուար 2020



Համաշխարհային քաղաքագիտական միտքը բազմիցս է անդրադարձել Վուդրօ Վիլսոնի քաղաքական ժառանգութեանը, սակայն գրեթէ ոչինչ չի արուել վեր հանելու համար ԱՄՆ նախագահի հետեւողական եւ անսկուն ջանքերը յանուն հայ ժողովրդի դարաւոր իղծերի իրականացման եւ, ամենակարեւորը, արժեւորելու համար այդ

գործունեութեան բարձրակետը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ սահմանը որոշող եւ մէկընդմիջտ ամրագրող իրաւարար վճիռի (arbitral award) քաղաքական անանց կարեւորութիւնը մերօրեայ Հայաստանի Հանրապետութեան ներկայի եւ ապագայի համար:

Իրաւարար վճիռի նախընթացը.

1920թ. ապրիլի 25-26-ին Դաշնակից եւ ընթերակայ ուժերի Գերագոյն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers), բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ նախագահին երկու խնդրանքով.

ա) ստանձնել Հայաստանի մանդատը,

բ) իրաւարար վճռով որոշել Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը (1):

Երկրորդ խնդրանքը նաեւ պաշտօնապէս ամրագրուեց Խաղաղութեան վեհաժողովի նախագահի՝ Ֆրանսիայի վարչապետ եւ արտգործնախարար Ալէքսանդր Միլերանի 1920թ. ապրիլի 27-ի պաշտօնագրով (2): Նույն խնդրանքը 89-րդ յօդուածի տեսքով ներառուեց ՍԵՐԻ դաշնագրի մէջ եւ արդէն Հայաստանի ու Օսմանեան Տէրութեան, ինչպէս նաեւ դաշնագիրը ստորագրած գրեթէ 20 երկրի անունից յղուեց ԱՄՆ նախագահին: ԱՄՆ նախագահը, իրաւասու մարմինները (պետքարտուղարութիւնը, պաշտպանութեան նախարարութիւնն ու նախագահի վարչակազմը) եւ համապատասխան աշխատանքային խումբը (պրոֆ. Վեստերմանի գլխավորութեամբ), մանրազնին ուսումնասիրեցին հայրը եւ կայացրին իրաւարար վճիռը:



Վուդրո Վիլսոնն իրաւարար վճիռը ստորագրեց 1920թ. նոյեմբերի 22-ին: Այն դեկտեմբերի 6-ին պաշտօնապէս փոխանցուեց Փարիզ՝ Դաշնակից ուժերի Գերագոյն խորհրդին: Սոյն վճիռի պաշտօնական եւ ամբողջական անուանումն է. «Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ», 22 նոյեմբերի 1920թ.:

Իրաւարար վճիռի բովանդակութիւնը.

Ըստ իրաւարար վճիռի՝ Հայաստանի Հանրապետութեան տիտղոսն ու իրաւունքները ճանաչուում էին նախկին Օսմանեան կայսրութեան Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների վրայ՝ ընդհանուր առմամբ 103.599 քառակուսի կիլոմետր: Դա կրկնակի քիչ էր այն տարածքից, որի վրայ Մուդրոսի զինադադարի 24-րդ յօդուածով ճանաչուել էր հայկական տիտղոսը: Նման Էական կրճատումը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ արդէն այդ ժամանակ ի յայտ էին եկել հայերի մարդկային հսկայական կորուստները՝ Հայոց ցեղասպանութեան հետեւանքով:

Իրաւարար վճիռի ներկայ կարգավիճակը.

Իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր է կատարման համար (3): Այն չունի ժամանակային սահմանափակում (4), եւ նրա կարգավիճակը կախում չունի վճիռի հետագայ ճակատագրից:

Միջազգային իրաւունքը, մասնաւորապէս Հաագայի միջազգայնագրի /կոնվենցիայի/ (1907թ.) 81-րդ յօդուածը, որով ամփոփուել եւ ամրագրուել է իրաւարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապէս չի նախատեսում վճիռի չեղեալ յայտարարում (5): Ըստ միջազգային իրաւունքի՝ կողմերը, համաձայնուելով իրաւարար որոշմանը ներկայացնել իրենց վեճը, մեկընդմիջտ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կը լինի իրաւարարի ամէն վճիռ (6): Իրաւարարութիւնն ի կատար ածելու կողմերից մեկի մերժումը չի ազդում վճիռի վաւերականութեան վրայ: Ըստ այդմ, քանի որ իրաւարարութեան հայցը ներկայացուել է ոչ միայն Հայաստանի եւ Թուրքիայի, այլեւ 16 այլ երկրների կողմից, ուստի վճիռը պարտադիր է բոլոր հայցողորների համար, որոնք ներկայումս հետեւեալ երկրներն են՝ Միացեալ Թագաւորութիւն, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարաւային Աֆրիկայի Հանրապետութիւն, Հնդկաստան, Պակիստան, Բանգլադէշ, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Չեխիա, Սլովակիա, Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա-Հերցեգովինա, Մակեդոնիա եւ Չեռնոգորիա: Այն պարտադիր է նաեւ իրաւարարի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ նախագահի իւրաքանչիւր պաշտօնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը (7) և իրաւարարութիւնից բխող քայլերը պարտադիր են կատարման համար (8):

Հայաստանը, որպէս ՄԱԿ-ի անդամ երկիր, կարող է ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով (Միջազգային դատարանի կանոնադրութեան 36-րդ յօդուածի 2-րդ կետի (ա) եւ (բ) ենթակէտերի հիման վրայ) հաւաստել Վիլսոնի իրաւարար վճիռի վաւերականութիւնը եւ դրանով իսկ վերահաստատել իր տիտղոսը իրաւարար վճիռով Հայաստանին յատկացուած տարածքի վրայ:

Յղումներ եւ ծանօթագրութիւններ.



1. The Treaties of Peace, 1919-1923, vol. I. NY, 1924, p. xxxii.
2. Papers Relating to Foreign Relations of the United States, 1920. Washington, 1936, v. III, p. 780.
3. A Dictionary of Arbitration and its Terms (ed. Seide K.). NY, 1970. p. 32.
4. Wildhaber L., Treaty Making Power and Constitution. Basel-Stuttgart, 1971, p. 98.
5. Sorensen M., Manual of Public International Law. New York, 1968, p. 693-4.
6. A Dictionary of Arbitration and its Terms. *ibid*, p. 27.
7. Wright Q., The Control of American Foreign Relations. NY, 1922, p. 38.
8. Collier J., The Settlement of Disputes in International Law. Oxford, 1999, p. 265.

## Տեսակէտ

### ԱՇԽԱՐՀԻ ՓՈԽՈՒՈՂ ԴԷՄՔԸ

#### Լուսանկար՝ Անի Սարգսեան («Հետք»)

#### ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ

#### «Ժամանակ»



Աշխարհը կը փոխուի: Մենք բացառիկ հնարաւորութիւն ունինք տեսնելու փոխաւոր աշխարհը եւ այդ փոփոխութեան մասնակից ըլլալու: Մեր աչքերուն առջեւ, քանի մը օրուան մեջ, փլաւ նախորդ աշխարհը, որուն մեջ կը բնակէր մոլորակը եւ նոր աշխարհի ստեղծելու առաջին քայլերը սկսած են արդէն...

Վերլուծական մեծ կեդրոններ, գիտնականներ եւ

ժամանակակից փիլիսոփաներ նոր աշխարհի ձեւակերպումներու մեջ են: Քորոնավարակը ընդամենը միջոց մըն է այդ փոփոխութիւնները իրականացնելու եւ տեսնելու նոր աշխարհին դէմքը:

«Քորոնավարակը այլեւս պիտի ապրի մեզի հետ, ան պիտի չբացակայի մեր կեանքէն», կ'ըսեն համաճարակաբանները: «...Մենք է, որ պիտի սորվինք ապրիլ իրեն հետ եւ դասեր քաղել իր անսպասելի այցելու ու տիրական ներկայութենէն: Ան եկաւ, որ վերաիմաստաւորենք մեր կեանքը, նայինք մեր ներսին, տեսնենք մեր շուրջը եւ խորհինք», այս ալ կ'ըսեն փիլիսոփաները:

Իրականութեան մեջ, այո՛, կեանքը, որ կ'ապրեինք, անվերջ հեւք մըն էր, սպառողական հոգեբանութեամբ վազք մը, որուն հետեւանքով մեծ վնասներ կը կրէին բնութիւնն ու մարդը: Յիմա վազք չկայ... Ամէն մարդ նստած է տունը եւ կը խորհի, քիչ մը կը վախնայ, քիչ մը կը սրտապնդուի, բայց ընդհանուր առումով այսօր, աշխարհավարակին պատճառով տունը նստած մարդը նոր ապագայ մը կը պատկերացնէ: Այո, մարդկային զոհերուն համար բոլորս կը ցաւինք, տնտեսական վնասները մեր աչքերուն առջեւն են, մինչ այս կուռ եւ ամուր թուացող փոշիացող կառոյցներուն փլիլը կը տեսնենք ու կ'ապշինք, բայց իւրաքանչիւր հին աշխարհի կործանում զոհեր եւ աւերումներ կը բերէ իրեն հետ, որպէսզի ստեղծուի նորն ու աւելի լաւը ըլլայ գալիքը:

Մարդկութիւնը այսօր մեծ դաս ունի սորվելիք. այն է՝ ի՞նչ պէտք է ընել մեծ ճգնաժամերու եւ աղետներու ժամանակ, ինչպէ՞ս դիմագրաւել եւ ինչպէ՞ս ստեղծել նոր աշխարհ: Այսօր մարդկութիւնը, աւելի քան երբեւէ, միտքով միասնական է: Բոլորը պատած նոյն ցաւը, նոյն





միտքերը նմանատիպ յոյզեր կը առաջացնեն եւ կը մղեն նոյնատիպ գործողութիւններ կատարելու: Կը վերանան բաժանումները, կը փլուզուին մարդկութիւնը իրարմէ բաժնող աշխարհայեացքները եւ այս բոլորը՝ փոքր թուացող վարակի մը շնորհիւ:

Աշխարհահռչակ գիտնական Միխայէլ Լայթմըն, հարցազրոյց մը տալով ռուսական հեռուստաալիքի մը՝ կ'ըսէ, որ մենք պետք է ոչ թէ անիծենք այս վարակը, այլ շնորհակալ ըլլանք իրեն, որ բացաւ մեր աչքերը՝ երկար ժամանակի մը համար: Լայթմըն կ'ըսէ, թէ քորոնան փրկեց մարդկութիւնը կործանումէն կամ երրորդ աշխարհամարտէ մը: Գիտնական Լայթմընին վերլուծման համաձայն, աշխարհը կեցած էր երրորդ աշխարհամարտի մը առջեւ, եկաւ թագի տեսքով, խորհրդաւոր անունով վարակ մը եւ կանխեց պատերազմը եւ պատերազմին բերելիք մեծ կործանումները...

Աշխարհամարտերէն ետք մարդկութիւնը երբեւէ կեանքի եւ մահուան սահմանագիծին այսքան մօտ չէր կեցած: Ո՞վ կը յարթէ. կեանքը, թէ՞ մահը: Անշուշտ կեանքը, բայց՝ նոր կեանքը. այսպէս է աշխարհի մեծ մտածողներուն մօտեցումը այս հարցին:

Մարդուն սրտին թաքուն մէկ անկիւնը բնաւորուած մահուան վախը, այսօր առաջին գիծ եկած եւ մարդուն բոլոր ուժերը հաւաքած, կրկնապատկած է, որպէսզի յարթէ մահուան եւ կեանքի նոր հանգրուան մուտք գործէ: Ահա վարակ մը, որ մարմինէն աւելի մարդուն հոգին եւ սիրտը տակնուվրայ ըրած է:

Այս տագնապներուն, խուճապին, անորոշութեան եւ վախին մեջ մարդը այսօր աւելի ստեղծագործող եւ արարող դարձած է: Ձանձրոյթը, տաղտկալի առօրեան, որ կային, այլեւս անցեալ են: Նոր կեանքը եկաւ մարդուն յուշելու, որ կեանքը ձանձրանալու եւ դժգոհելու համար չէր, որ տրուած էր, այլ՝ ապրելու, կարեկցելու, բնութեան թելադրած պարզ օրէնքներուն հետեւելու եւ պզտիկ ուրախութիւններով ապրելու, մանաւանդ՝ շնորհակալ ըլլալու ամէն մէկ օրուան համար:

Քորոնան արթնցուց բոլոր քնացած զգայարանքները եւ սթափութեան ուղիին վրայ դրաւ մարդը: Այսօր, այս պահուն կայացող բոլոր որոշումները ճակատագրական պիտի ըլլան վաղուան կեանքին համար:

...Անցնող շաբաթավերջին աշխարհի լրատուամիջոցները տպագրեցին եւ միլիոնաւոր քանակներով տարածեցին իսրայէլցի պատմաբան, գիրքերու հեղինակ Եուվալ Նոյ Յարարիի «Աշխարհը քորոնավարակէն ետք» յօդուածը: Երուսաղէմի հրեական համալսարանի պատմութեան ամպիոնէն փրոֆեսէօր Եուվալ Նոյ Յարարին նախապէս յայտնի էր աշխարհի վերափոխման եւ վերածնւարման մասին իր գիրքերով, որոնք միշտ պեսթսելլըրներ եղած են: Յօդուածը քորոնավարակէն ետք եկող նոր կեանքի մասին է եւ հատուածաբար կը ներկայացնենք նաեւ արեւմտահայերէնով.

«Այս փոթորիկը կ'անցնի, բայց այն որոշումները, ինչ որ մենք կ'ընդունինք այսօր, կարող են փոխել մեր կեանքը գալիք տարիներուն»:

«Մարդկութիւնը հիմա կեցած է համաշխարհային ճգնաժամի առջեւ: Ասիկա թերեւս մեր սերունդի ամենամեծ ճգնաժամն է: Այն որոշումները, ինչ որ մարդիկ եւ կառավարութիւնները պիտի կայացնեն յառաջիկայ մի քանի շաբթուան ընթացքին, հաւանաբար կը ձեւաւորեն աշխարհը՝ գալիք տարիներուն համար: Այդ որոշումները կը ձեւաւորեն ոչ միայն մեր





առողջապահական համակարգերը, այլ մեր տնտեսութիւնը, քաղաքականութիւնն ու մշակոյթը: Մենք պետք է գործենք արագ եւ վճռական: Պետք է նաեւ նկատի առնել մեր գործողութիւններուն երկարաժամկետ հետեւանքները: Այլընտրանքներուն միջեւ ընտրութիւն կատարելու ժամանակ պետք է մենք մեզի հարց տանք ոչ միայն այն, թէ ինչպէ՞ս յաղթահարել անմիջական սպառնալիքը, այլ ինչպէ՞ս պիտի ըլլայ այն աշխարհը, ուր պիտի բնակինք՝ փոթորիկը հանդարտելէն ետք: Այո՛, փոթորիկը պիտի անցնի, մարդկութիւնը պիտի գոյատեւէ, մեզմէ շատեր ողջ պիտի մնան, բայց մենք այլեւս պիտի բնակինք ուրիշ աշխարհի մը մէջ»:

«Շատ կարճաժամկետ արտակարգ ձեռնարկները պիտի դառնան մեր կեանքի անբաժան մասը: Ա՛յս է արտակարգ իրավիճակներու բնոյթը: Անոնք կ'արագցնեն պատմական գործընթացները: Որոշումները, որոնք սովորական ժամանակներուն կարող են տարիներու քննարկում պահանջել, այսօր պիտի ընդունուին ժամերու ընթացքին: Ոչ հասուն եւ նոյնիսկ վտանգաւոր արհեստագիտական միջոցները պիտի գործադրուին, քանի որ ոչինչ ձեռնարկելու վտանգները աւելի մեծ են: Երկիրները լայնածաւալ ընկերային փորձարկումներով պիտի ծառայեն որպէս ծովախոզուկներ: Ի՞նչ կը կատարուի, երբ ամէն մարդ աշխատի տունէն եւ հաղորդակցի միայն հեռուէն: Ի՞նչ տեղի կ'ունենայ, երբ դըպրոցներն ու համալսարանները գործեն առցանց: Սովորաբար կառավարութիւնները, ձեռնարկատիրութիւնները եւ կրթական խորհուրդները երբեք չէին համաձայնիր նման փորձարկումներ կատարելու: Բայց հիմա սովորական ժամանակներ չեն»:

«Ճգնաժամին ընթացքին կանգնած ենք մանաւանդ երկու կարեւոր ընտրութեանց առջեւ.

Առաջինը՝ ընտրութիւն ամբողջատիրական հսկողութեան եւ քաղաքացիական հզօրացման միջեւ: Երկրորդ՝ ազգայնական մեկուսացման եւ համընդհանուր համերաշխութեան միջեւ:

...Անդրադառնալով այս երկրորդ ընտրութեան, պետք է ըսել, որ համաճարակը եւ անոր հետեւանքով սպասուող տնտեսական ճգնաժամը համընդհանուր հարցեր են, զորս կարելի է արդիւնաւետ լուծումներու յանգեցնել միայն համընդհանուր համագործացութեան միջոցով:

Վարակը յաղթահարելու համար, նախ եւ առաջ, պետք է տեղեկատուութիւն փոխանակելք իրարու հետ: Ասիկա վարակներուն հանդէպ մարդոց մեծ առաւելութիւնն է: Չինաստանի մէջ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ քորոնաժահրով մարդոց վարակուելուն մասին խորհուրդներ չեն կրնար փոխանակել: Բայց Չինաստանը կրնայ քորոնաժահրին մասին ԱՄՆ-ին տալ կարեւոր դասեր եւ թէ ինչպէ՞ս վարուիլ անոր հետ: Ինչ որ իտալացի բժիշկը վաղ առաւօտեան կը յայտնաբերէ Միլանոյի մէջ, կարող է երեկոյեան կեանքեր փրկել Թեհրանի մէջ: Երբ Մեծն Բրիտանիոյ կառավարութիւնը կը տատանի քանի մը ուղիներու միջեւ, կարող է խորհուրդներ ստանալ քորեացիներէն, որոնք մէկ ամիս առաջ կեցած էին նման հարցերու առջեւ: Բայց որպէսզի այդ մէկը տեղի ունենայ, մեզի անհրաժեշտ է համընդհանուր համագործակցութեան եւ վստահութեան ոգի:

Երկիրները պետք է պատրաստ ըլլան բաց կերպով տեղեկատուութիւնը փոխանակելու եւ համեստօրէն խորհուրդ հարցնել ու կարենալ վստահելու իրենց ստացած տուեալներուն: Մեզի անհրաժեշտ է նաեւ ջանքերը միաւորել, բժշկական սարքաւորումներ, մասնաւորապէս՝ ախտորոշիչ փորձանակներ ու շնչառական մեքենաներ արտադրելու եւ զանոնք աշխարհին տարածելու համար: Համակարգուած համընդհանուր ջանքերը կրնան արագացնել անոնց արտադրութիւնը եւ ապահովել, որ կեանք փրկող սարքաւորումները աւելի արդար բաշխուին, քան եթէ անջատ երկիր մը փորձէ այդ մէկը ընել տեղական մակարդակով: Ճիշդ այնպէս, ինչպէս



երկիրները պատերազմի ընթացքին կ'ազգայնացնեն արդիւնաբերութեան հիմնական ճիւղերը, քորոնա հաճարակին դէմ մարդկային պատերազմը կարող է պահանջել մարդկայնացնել արտադրութեան կարեւոր ուղղութիւնները: Քորոնավարակի միայն մի քանի դէպք ունեցող հարուստ երկիրը պէտք է պատրաստ ըլլայ թանկ սարքաւորումներ ուղարկել աղքատ երկիրներ. վստահ ըլլալով, որ երբ ինք օգնութեան կարիք ունենայ, ուրիշ երկիրներ իրեն օգնութեան հասնին:

Բժշկական անձնակազմին համախմբումը կարող ենք համարել նման համընդհանուր ցանքերէն: Ներկայիս աւելի քիչ տուժած երկիրները կարող են բոյժանձնակազմ դրկել վարակէն ամենաշատ տուժած երկիրներ՝ թէ՛ այդ երկրին կարիքի ժամանակ օգնելու եւ թէ՛ արժէքաւոր փորձ ձեռք ձգելու համար: Եթէ աւելի ուշ համաճարակը տարածուի ուրիշ տեղեր, օգնութիւնը կարող է գալ հակառակ կողմէն:

Համընդհանուր համագործակցութիւնը անհրաժեշտ է նաեւ տնտեսական գետնի վրայ: Նկատի առնելով տնտեսութեան համընդհանուր բնոյթը եւ ապրանքներու մատակարարման շղթաները, եթէ իւրաքանչիւր կառավարութիւն իր գործը կատարէ, լիովին անտեսելով միւսները, ապա արդիւնքը կ'ըլլայ քասոսը՝ խառնակ վիճակը եւ խորացող ճգնաժամը: Պէտք է գործողութեան համընդհանուր ծրագիր եւ այդ մէկը պէտք է շատ արագ:

Ուրիշ անհրաժեշտութիւն մըն է ճամբորդութեանց գիծերով համընդհանուր համաձայնութեան գալ: Բոլոր միջազգային ճամբորդութիւնները ամիսներով դադրեցնելը հսկայական դժուարութիւններ կը ստեղծէ եւ կը խոչընդոտէ քորոնավարակին դէմ պատերազմը: Երկիրները պէտք է համագործակցին, որպէսզի գոնէ հիմնական ճամբորդութիւններուն մէկ մասը կարենայ հատել սահմանները: Ատոնք կ'ըլլան գիտնականները, բժիշկները, լրագրողները, քաղաքական գործիչները, գործարարները: Այդ մէկը կարելի է ընել՝ ձեռք ձգելով համաձայնութիւն, որ իւրաքանչիւր երկիր նախնական զննման ենթարկէ իր երկրէն ճամբորդողները: Եթէ գիտնանք, որ միայն բոյժզննումէ անցած մարդոց կ'արտօնուի օդանաւ նստիլ, ապա աւելի պատրաստակամ կ'ըլլանք զանոնք ընդունելու:

Ցաւօք, հիմա երկիրները դժուար թէ կատարեն նշուած քայլերէն որեւէ մէկը: Միջազգային հանրութիւնը հաւաքական կարեւածի, յանկարծակի անդամալուծութեան մեջ է: Սենեակ մըն է, ուր կարծես մեծահասակներ չկան: Կ'ակնկալուէր, որ շաբաթներ առաջ տեսնէինք երկրի ընդհանուր առաջնորդներուն արտակարգ հանդիպումը, որ կ'առաջարկէր գործողութիւններու միասնական ծրագիր մը: «Մեծ եօթնեակ»ի երկիրներու առաջնորդները յաջողեցան այս շաբաթ, համացանցի միջոցով, տեսակապային հանդիպում մը կազմակերպել, սակայն այդ մէկը ոչ մէկ արդիւնք բերաւ: Նախորդ համընդհանուր ճգնաժամերուն ընթացքին, ինչպէս՝ 2008 թուականի տնտեսական ճգնաժամը եւ 2014 թուականի Էպոլայի համաճարակը, Ա.Մ.Ն.-ը կը ստանձներ ընդհանուր առաջնորդի դերը: Բայց Ա.Մ.Ն.-ի ներկայ վարչակազմը, այս համավարակի պարագային, հրաժարեցաւ առաջնորդի դերէն: Վարչակազմը շատ պարզ հասկցուց, որ աւելի շատ մտահոգ է Ամերիկայի հզօրութեամբ, քան մարդկութեան ապագայով:

Այս վարչակազմը լքեց Նոյնիսկ իր ամենամօտ դաշնակիցները, երբ արգիլեց Եւրոմիութեան երկիրներէն բոլոր թռիչքները, վարչակազմը չփորձեց Նոյնիսկ Եւրոպական Միութիւնը նախապէս զգուշացնել սպասուող կտրուկ փոփոխութեան մասին: Վարչակազմը գայթակղութեան ենթարկեց Գերմանիան՝ իբր թէ 1 միլիառ տոլար առաջարկելով գերմանական դեղագործական ընկերութեան՝ գնելու Նոր «Քովիտ-19»ի դէմ պատուաստանիւթի



մենաշնորհային իրաւունքները: Նոյնիսկ եթէ ներկայ վարչակազմը, ի վերջոյ, փոխէ գործելաոճը եւ հանդէս գայ գործողութիւններու համընդհանուր ծրագրով, քիչեր պիտի հետեւին այնպիսի առաջնորդի, որ երբեք պատասխանատուութիւն չի ստանձներ, երբեք չ'ընդունիր իր սխալները, այլ պարբերաբար իր վրայ կը վերցնէ յաջողութեան փառքը, միաժամանակ անընդհատ սխալներուն համար ուրիշները կը մեղադրէ:

Եթէ Ա.Մ.Ն.-ի թողած դատարկութիւնը չլրացուի ուրիշ երկիրներու կողմէ, դժուար պիտի ըլլայ ոչ միայն դադրեցնել ներկայ համաճարակը, այլեւ անոր ժառանգութիւնը պիտի շարունակէ յետագայ տարիներուն ընթացքին թունաւորել միջազգային յարաբերութիւնները:

Սակայն իւրաքանչիւր ճգնաժամ նաեւ հնարաւորութիւն է: Մենք պէտք է յուսանք, որ այս համաճարակը պիտի օգնէ մարդկութեան գիտակցելու համընդհանուր անհամաձայնութեան սուր վտանգը: Մարդկութիւնը պէտք է ընտրութիւն կատարէ. «Արդեօք մենք կ'ընթանա՞նք անհամաձայնութեան ճանապարհով, թէ՞ կ'ընդունինք համընդհանուր համերաշխութեան ուղին»: Եթէ ընտրենք անհամաձայնութիւնը, այդ մէկը ոչ միայն պիտի երկարաձգէ ճգնաժամը, այլ, հաւանաբար, յետագային պիտի յանգեցնէ ա՛լ աւելի վատ աղէտներու: Եթէ ընտրենք ընդհանուր համերաշխութիւնը, ապա ատիկա կ'ըլլայ յաղթանակ ոչ միայն քորոնաժահրին դէմ, այլ ապագայ բոլոր համաճարակներուն եւ ճգնաժամերուն դէմ, որոնք կրնան սպառնալ մարդկութեան 21-րդ դարուն»:

#### ԲՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՆԳՍՏԱՆԱԶ...

Քորոնաժահրը իրեն հետ բերաւ բնապահպանական մեծ օգուտներ: Մարդոց եւ ինքնաշարժներու, օդանաւերու տեղաշարժին սահմանափակումը, արտադրական եւ զանազան ձեռնարկութիւններու աշխատանքին կրճատումը՝ բարերար ազդեցութիւն ունեցաւ երկիր մոլորակին վրայ: Մարդիկ կը նկատեն, որ կարգ մը վայրերու մէջ այսօր օդը աւելի մաքուր է, աղմուկը՝ ցած, ջուրերը՝ հանդարտ եւ Մոլորակը կարծես քիչ մը հանգիստ կ'ընէ մարդկային խելայեղ շահագործումէն: Լուսանկարներ առնուած են Վենետիկէն, ուր ջրանցքներուն ջուրը մաքուր ու ջինջ է, յատակի ձուկերը կ'երեւին, ջուրերուն մէջ նոյնիսկ կարապներ յայտնուած են եւ հանգիստ կը լողան: Նաւահանգիստներուն մօտեցած են դլփիներ ու զարմացած կը դիտեն շուրջերևին:

Չբօսաշրջային ուրիշ վայրեր, որ տարուան այս եղանակին լեցուն կ'ըլլար հանգստացողներով, այսօր պարապ են եւ հոն հազուադէպ թռչուններ յայտնուած են, կը գեղգեղեն բնութեան մէջ: Աղմուկի բացակայութենէն եւ վնասակար նիւթերու արտանետումներէն բնութիւնը տեսակ մը վերակենդանացում կ'ապրի: Քորոնաժահրը ուշադրութիւն հրակիրեց նաեւ շատ բնապահպանական հարցերու վրայ:

Արդեօք ժահրը յայտնուեցաւ եւ այսպէս արագօրէն տարածուեցա՞ւ, քանի որ անմաքուր է մեր Մոլորակը. այս հարցումը շատ յաճախ կը հնչէ այս օրերուն եւ իր մէջ անպայման ճշմարտութեան բաժին մը ունի: Մարդուն մարմինը տիեզերքին փոքր ձեւաչափն է եւ մարդուն մարմինն մէջ բոյն դրած ժահրի մը միջոցով բնութիւնը այսօր մարդկութեան կարեւոր ըսելիք ունի: Պիտի շարունակե՞ք մարդը անխնայ շահագործել Մայր բնութիւնը, որ միշտ սնած է մարդկութիւնը եւ այսօր մենք կախեալ ենք իրմէ: Պիտի շարունակե՞ք մարդը աղբը նետել բնութեան մէջ եւ մաքուր ուտելիք սպասել նոյն բնութենէն:




---

Ահա հարցումներ, որոնց պատասխանները արագ պիտի գտնուին եւ լուծումներ տրուին բնապահպանական աղետին, որ պատած է երկիրը: Մայր Բնութիւնը իր գիրկէն տուն քշած է մարդիկը, որպէսզի երթան եւ մտածեն: Մտածելու ժամանակ կայ: Մինչ մենք կը մտածենք եւ ուղիներ կը գտնենք, Մոլորակը քիչ մը կը հանգստանայ: Բնութիւնը ինքնամաքրումի ճամբուն վրան է:

## Տեսակէտ

### ՈՎՔԵՐ Դ ԱԻԵԼԻ ԿՐ ՅԻՇԵՆ ՀՈՂԸ ՄԵՆՔ՝ ՀԱՅԵՐՍ, ԹԷ ԱՐԱԲՆԵՐԸ



Մեծ Եղեռնի տարելիցի առիթներուն անգամ, արաբ յառաջապահ մտաւորականներ, աւելի յաճախ յիշած են Մեր Հողերը, քան՝ հայ պահպանողական մտաւորականները: Ուրեմն, ասոնք՝ երբ կը մոռնան Մեր Հողերը, բնա՛ւ պիտի չյիշեն ուրիշ ժողովուրդներու բռնագրաւեալ հողերը. ինչպէս օրինակ՝ Պաղեստինը, Քիւրտիստանը, Իսկէնտերունը, Ժուլանը, կամ ալ Նոյնիսկ՝ Հարաւային Լիբանանի Շըպա՛ան ու Ղաժարը: Իսկ պատմական յիշողութիւնը՝ ժողովուրդի մը ազգային ինքնութեան անբաժանելի մասը կը կազմէ. ինքնաճանաչումի գլխաւոր քաղաղորիչներէն մէկն է (ինչպէս՝ լեզուն):

Մեր Տարագիր Արեւմտահայը կորսնցնէ իր հայրենագրկեալի գիտակցութիւնը, եւ ապրի ու գործէ իբր Տարաբնակ Հայ... կը դառնայ պակասաւոր, կամ թերի հայ մը. մասամբ մը օտարացած հայ... որ առաջին քայլն է դէպի ամբողջական օտարացում՝ ծուլում:

Արտերկրի մէջ, հայապահպանումի միակ շօշափելի եւ փրկարար նպատակը՝ Արեւմտահայաստանի, Արարատի եւ Կիլիկիոյ ազատագրութեան անփոխարինելի նպատակն է: Այլապէս՝ դուրսերը, հայապահպանումի ջանքերը կը մնան անհեռանկար, ինքնանպատակ, եւ ի վերջոյ աննպատակ՝ անիմաստ, աւելորդ, շան քարոզ, գայլի գլխուն աւետարան, եւ մտային գիջութիւն, կամ՝ հայու դեր խաղալու դերասանութիւն (ինչպէս ըսած է Չարեհ Մելքոնեան). ինչ որ միայն բեմերու վրայ կրնայ գեղեցիկ ըլլաւ, բայց ապրուած կեանքի մէջ՝ գարշելի (ինչպէս ըսած է անմահն Թումանեան), եւ ինչ որ իրաւ կեանքի տգեղ ծաղրանկարն է ցնորական:

Հիմա տեսնենք թէ ինչե՛ր ըսած են արաբ յառաջապահ մտաւորականները, Մեծ Եղեռնի 70-րդ տարելիցին (1985-ին), Պէյրութի «Ազգային Մշակոյթ» շաբաթաթերթին մէջ, երբ տակաւին գոյ էին Սովետ Միութիւնն ու Հայաստանը, որոնց հակապատկերն են Լիբանանի խորհրդարանին երկու յաջորդական բանաձեւերը (3 Ապրիլ 1992-ին եւ 2000 թ. 85-րդ տարելիցին), երբ այլեւս գոյ չէին Սովետ Միութիւնն ու Հայաստանը, բայց խորհրդարանին մէջ կային վեց հայ երեսփոխաններ, եւ լիբանանահայութիւնը մեծ համայնքներուն 7-րդն էր երկրին մէջ:

Եւ պարզուող որակական մեծ տարբերութիւնը ճանաչումներուն միջեւ՝ թող բացատրեն եւ վերլուծեն բոլոր անոնք, որոնք դեմ էին ՀԱՅԿԱԿԱՆ Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Ոսկեդարին. նաեւ՝ անոնք, որոնք երեկ կը ճանչնային այս Ոսկեդարը, սակայն Արեւելահայաստանի «անկախութենէն» յետոյ, խաբուելով «անկախութեան» փայլուն «պոնճուխ»ի հմայիլէն, մոռցան Ոսկեդարը, անցուկը մոռցուկ ըրին, եւ վազեցին օլիգարխիական համակարգով ապագային Արեւելահայաստան, պատեհապաշտօրէն գոչելով. «Արբան մահացաւ՝ կեցցէ՛ Նոր Արբան»:

Լիբանանի խորհրդարանի Ա. Բանաձեւը՝ սոսկ բարոյական ու սնամէջ, շրթնային բանաձեւ մըն էր, որ արժանի չէ Նոյնիսկ յիշուելու...:

Բ. Բանաձեւը հետեւեալն է.



«Լիբանանի խորհրդարանը, 85-րդ տարեդարձին առիթովը, այն ջարդերուն որոնք գործադրուեցան 1915 թուին օսմանեան իշխանութիւններուն կողմէ, որոնց զոհ գացին 1.5 միլիոն հայեր, կը ճանչնայ եւ կը դատապարտէ հայ ժողովուրդին դէմ գործուած զանգուածային բնաջնջումը, եւ իր բացարձակ զօրակցութիւնը կը յայտնէ՝ իր հայ քաղաքացիներուն պահանջներուն, եւ կը նկատէ որ միջազգային ճանաչումը այս բնաջնջումին, հիմնական պայման մըն է արգիլելու համար նման ոճիրներուն հաւանական պատահումը ապագային»:

Ընթերցողներուն կը թողուք այս բանաձեւին որակումը տալու իրաւունքը, որուն մէջ չեն յիշուած ոչ թուրանական Իթթիհատը, ոչ Արեւմտեան Հայաստանը, եւ ոչ ալ հայ ամբողջ ժողովուրդին պահանջները հայրենիք վերադարձի. այլ միայն յիշուած է «իր հայ քաղաքացիներուն» պահանջները...: (Հոս խիստ կարեւոր է վերյիշել, որ այս երկրին մէջ մենք ճանչցուած ենք որպէս յարանուանական համայնքներ, եւ ոչ թէ իբր ազգային փոքրամասնութիւն: Այսինքն՝ «քաղաքացի»ն յարանուանութեան մը զաւակն է, եւ ոչ թէ ազգի մը...):

Անցնինք:

Սուրիացի մտաւորական խմբագիր եւ հեղինակաւոր հրապարակագիր ու հասարակական գործիչ Հաքքի Ալ-Ա՛ազամ (1864-1955), 1916 թուականէն Փարիզի մէջ իր հրատարակած «Մուսթաքալ» թերթին 26 Յունուար 1917 թուականակիր թիւ 48 համարին մէջ գրած է. «Թուրանական Իթթիհատն է Հայոց Տեղասպանութեան ոճիրը գործողը: Այս իրողութիւնը պարզուեցաւ որոշապէս՝ Մեքքէի Շերիֆ, Հիճազի թագաւոր Ալ-Հուսէյն Պըն Ալիի հրատարակած հրամանէն՝ բոլոր արաբներուն եւ իսլամներուն: Իսկ ճեմալ Փաշա սուտ կը խօսի, երբ կ'ըսէ թէ՛ կատարուող ոճիրները սովորական եւ անհատական արարքներ են...»:

Եւ թերթի 10 Մայիս 1919 թուականակիր թիւ 103 համարին մէջ, «Իսկ Վաղը՝ Հերթն է Սուրիացիներուն» խորագրին տակ գրած է. «Թուրք պետական մարդոց կիրքին բռնութեանց եւ ոճրագործութեանց ծանօթները՝ ժամէ ժամ, հաւանական կը նկատեն հասնիլը սահմուկեցուցիչ լուրերու, թէ՛ արդէն սկսած են ջարդերը նաեւ Արեւելեան Հայաստանի մէջ, ռուսական զօրքի քաշուելուն հետեւանքով:

«Եթէ Աստուած չօգնէ հայերուն՝ Կովկասեան (Արեւելեան) Հայաստանի մէջ, զանոնք փրկելու համար քսաներորդ դարու դահիճներուն զուլումէն, ոչ ոք պիտի փրկուի սպասուող ջարդերէն՝ Արեւելեան Հայաստանի մէջ: Արաբները, եւ մասնաւորաբար սուրիացիները, լաւ թող գիտնան՝ եթէ մնանք թրքական լուծին տակ, միայն մէկ սերունդ յետոյ՝ մեր պատուական լեզուն պիտի անհետանայ, եւ անոր փոխարէն բարբարոս թուրքերէն լեզուն պիտի պարտադրուի մեզի, եւ՝ պիտի ներլուծուի մեր հաստատ ազգային ինքնութիւնը՝ թուրանականութեան մէջ...»:

Հաքքի Ալ-Ա՛ազամ եղաւ օսմանեան պետութենէն տարանջատուած Սուրիոյ Հանրապետութեան առաջին վարչապետը: Անոր որդին՝ Խալէտ Ալ-Ա՛ազամ, 1955-ին եղաւ Սուրիոյ վարչապետը, երբ երեսփոխանական ընտրութիւններուն, Դամասկոսի մէջ, Սուրիոյ Կոմկուսի ընդհանուր քարտուղար Խալէտ Պէքտաշի հետ յաղթանակած էր առաւելագոյն ձայներ ստանալով: Այս երկու Խալէտներու համագործակցութեամբ, 1955 թուին, Սուրիոյ վարչակարգը եղաւ արաբական աշխարհի միակ դեմոկրատական ու հայրենասիրական վարչակարգը, որ առաջին գործակցողը եղաւ Չեքոսլովաքիոյ եւ Սովետ Միութեան հետ...:



Մինչ Լիբանան, որ անուանապէս «անկախ» երկիր կը նկատուէր, իր բազմահամայնքային համակարգով ու վայրի դրամատիրական տնտեսութեամբ, կը մնար հակադէմոկրատական եւ Արեւմուտքէն կախեալ պետութիւնիկ... իր խորհրդարանով միասին...:

1985 թուի «Ազգային Մշակոյթ» շաբաթաթերթի բացառիկին տուած իրենց յայտարարութիւններուն մէջ, արաբ յառաջապահ մտաւորականները կը խօսին Յայ Զողային Դատին, Արեւմտահայաստանի բռնագրաւումին, Իթթիհատի Թուրանականութեան եւ Տարագրեալներու հայրենիք վերադառնալու իրաւունքին մասին (եւ ոչ թէ միայն՝ 1.5 միլիոն հայ նահատակներուն մասին), եւ որոնք ուսանելի են նաեւ հայ «ճանաչումապաշտ»ներուն...: Անոնք են. Նախկին երեսփոխան ու Նախարար Ալպեր Մանսուր, խորհրդարանի փոխ-Նախագահներ Մուհիր Ապու Ֆատել եւ Էլի Ֆըրզլի, վարչապետ Ռաշիտ Սուլի, երեսփոխան եւ ճոմպլաթի կուսակցութեան ղեկավարներէն Ֆարիտ Շըպրան, բանաստեղծներ Սայիտ Աքըլ եւ Ատոնիս, Ղովմի Սուրի Կուսակցութեան Գերագոյն Խորհուրդի Նախագահ Մոուան Ֆարէս, առողջապահութեան Նախարար Մուհամմետ Պայտուն, սուրիացի թատերագիր Ուալիտ Իխլասի, եւ համայնագիտարանի հեղինակ ու բանասէր Նայիմ Ալ-Եաֆի, վիպագիր Յաննա Մինէ եւ ուրիշներ, որոնց խօսքերուն եզրափակիչ տողերը միայն պիտի մէջբերենք ստորեւ.

ՀԱՆՆԱ ՄԻՆԷ, որ հայոց նուիրած է իր «Կեռաս Բերան» վէպը, զոր կ'եզրափակէ գրելով. «Բարձր կը գնահատենք հայերու պայքարի միջազգայնական ոգին, որուն շնորհիւ պիտի կարողանան իրագործել իրենց արդարագոյն դատը»:

ՌԲԱԼԻՏ ԻՆՍԱՍԻ կը գրէ. «Հայերը գիտցան սերտաճիլ Սուրիոյ ժողովուրդին հետ, եւ իբր արդիւնք՝ կրցան պահպանել իրենց ազգային ինքնութիւնը»:

ՆԱՅԻՄ ԱԼ-ԵԱՖԻ գրեց. «Հայերը՝ հակառակ Ցեղասպանութեան ու Տարագրութեան, շարունակեցին պայքարիլ Մայր Հայրենիք վերադարձի համար, եւ պահանջեցին երեք արդարացի բան. ճանաչումը Ցեղասպանութեան, վերադարձը պապենական հողին եւ համապարփակ հատուցում: Թրքական ֆաշիզմը եւ Սիոնիզմը կրնան բնաջնջել մաս մը հայեր ու մաս մը արաբներ, սակայն չեն կրնար բնաջնջել Հայ Ազգն ու Հայրենիքը եւ Արաբ Ազգն ու Պաղեստինը: Իսկ ապագան կը պատկանի այն ժողովուրդներուն, որոնք կը կանգնին տերը իրենց դատին եւ կը պայքարին արդարութեան յաղթանակին համար...»:

ԱԼՊԵՐ ՄԱՆՍՈՒՐ. «70 տարիներ ետք ալ կը կրկնենք մեր դատապարտումը այս բարբարոսային ոճիրին՝ բռնագրաւեալ Արեւմտեան Հայաստանի հողին վրայ, որովհետեւ ասիկա պարտականութիւնն է բոլոր մարտնչող հայրենասէրներուն, ուր որ ալ գտնուին անոնք, քանի որ ամէն ժողովուրդի անկապտելի իրաւունքն է՝ ազատ ինքնորոշումը իր ազատագրուած պատմական հայրենիքի հողին վրայ»:

ՄՈՒՆԻՐ ԱՊՈՒ ՖԱՏԷԼ. «Լիբանան ու Արաբ Աշխարհի եւ համայն մարդկութիւնը պարտի զօրավիգ կանգնիլ՝ արդար Հայ Դատին, տարագրեալներու հայրենիք վերադարձին...»:

ՔԵՐԻՄ ՄՈՒՐԷ՝ Լիբանանի Կոմկուսի Քաղպիւրոյի անդամ. «Ազատասէր ու խաղաղասէր ամէն մարդու պարտականութիւնն է՝ զօրավիգ կանգնիլ հայ ժողովուրդի հայրենիք վերադարձի անկապտելի իրաւունքին, եւ դատապարտել թուրանական ֆաշիզմին գործած այս բարբարոսային ոճիրը, մինչեւ արդար լուծումը՝ արդար Հայ Զողային Դատին»:





ՖԱՐԻՏ ԺՐՈՒՄ. «1915 թուի այն մեծ ոճիրը որ գործուեցաւ օսմանեան իմփերիալիզմի ձեռամբ՝ հայ ժողովուրդի պատմական հայրենիքին հողին վրայ, ոչ մէկ թողութեան կրնայ արժանանալ: Պատմութիւնը բնա՛ւ չի մոռնար... Եւ հայ ժողովուրդը մեծ է՝ քանի որ չի մոռնար իր նահատակներն ու բռնագրաւեալ հայրենիքը»:

ՌԱՇԻՏ ՍՈՒՂ. «Երիտթուրքերը հայ ստեղծագործ հին ժողովուրդին դէմ գործադրեցին դարուն Ա. Տեղասպանութիւնը, Արեւմուտքի մեծ տերութիւններուն մեղսակցութեամբ: Այս ժողովուրդը իրաւունքը ունի վերադառնալու իր հայրենիքը, որպէսզի հոն վերստին կերտէ իր քաղաքակրթութիւնը, որ նպաստած է համաշխարհային քաղաքակրթութեան կերտումին ու տարածումին»:

ԴՈՎՏ. ՄԱՐԳՐԻՏ ԶԵԼՈՒ՛ Լիբանանեան Զամալսարանի Պատմութեան Ամբիոնի դասախօս, գրած է. «Երբ թուրանական ծրագրի երազները սնուցանուեցան երիտթուրքերուն կողմէ Թուրքիոյ մէջ, վտանգը աւելցաւ Արեւմտեան (Օսմանեան) Զայաստանի հայութեան վրայ, որովհետեւ՝ աշխարհագրականօրէն կը գտնուէր թուրանական ծաւալողական ծրագրի ճամբուն վրայ, որուն առաջին քայլը պիտի ըլլար՝ վերացնել Զայաստանի խոչընդոտը այս ճամբէն, որ հողային անմիջական կապ կ'ուզէր հաստատել Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ, անկէ տարածուելու համար դէպի Կեդրոնական Ասիա մինչեւ Չինաստան: Եւ երիտթուրքերը՝ 1915 թուի գարնան, գործադրեցին ոչ միայն Արեւմտահայոց զանգուածային Տեղասպանութիւնը, այլեւ աւելի մեծը՝ Արեւմտահայոց զանգուածային Տարագրութիւնը, Արեւմտեան Զայաստանը պարպելու համար իր բնիկ ժողովուրդէն: Այս երկու ոճիրներուն սպառնիչ խոստովանութիւնը կատարեց Թուրքիոյ յատենի ներքին գործոց նախարար Թալէաթ Փաշան, երբ ըսաւ. "Ես յաջողեցայ միայն երեք ամսուան մէջ իրագործել այն, զոր Սուլթան Ապտիվ Զամիտ չկրցաւ՝ երեսուն տարուան մէջ..."»:

«Մատերիապաշտ Զոսանքներ Իսլամի Ուսմունքին Մէջ» խորագրով երկհատոր համայնագիտարանային ու ակադեմական երկին հեղինակը՝ կոմունիստ նահատակ ԶԻԲՍԷՅՆ ՄՈՒՒԷՆ, իր նահատակութենէն երկու տարիներ առաջ (1985-ին) ըսած էր. «Զայոց Տեղասպանութեան սարսափելի ոճիրը գործեցին թուրք թուրանական ցեղապաշտ ճիւղները, որ եղաւ առաջին օղակը շարք մը յաջորդական ջարդերու շղթային, որոնք գործուեցան կարգ մը խաւարամետ իմփերիալիստ ուժերու կողմէ, սկսեալ գերման նացիներէն մինչեւ սիոնական վոհմակները: 1915 թուի Զայոց Տեղասպանութեան ու բռնահանումի աղէտէն ի վեր՝ եօթանասուն տարիներու երկայնքին, քանի-քանի աղէտներ եւ ցեղասպանութիւններ կատարուեցան, քանի որ Թուրքիա չպատժուեցաւ»:

ՇԵՅՆ ԶԱՍԱՆ ԱԼ-ՄԱՍՐԻ. «1915 թուին պատահեցաւ հետեւեալը: Ոճրագործութեան վարժ ձեռքեր՝ խաղաղասէր, անզէն, միայն զինեալ, հայրենիքի եւ իր ազգային սրբութիւններուն հաւատքով հայ ժողովուրդին դէմ գործեցին սպանդներ, աքսորներ իր հայրենի հողէն, կողոպուտներ, հայերը ցրուելով աշխարհի չորս ծագերուն: Եւ այս բոլորը՝ ոչ միայն աշխարհի տեսողութեան ու լսողութեան դիմաց, այլեւ՝ քաջալերանքովը աշխարհի բոլոր իմփերիալիստ ուժերուն, եւ ոչ մէկ տերութիւն դատապարտեց ոճրագործները: Եւ այս պատճառով, զանգուածային ջարդերը շարունակուեցան համաշխարհային իմփերիալիզմին կողմէ»:

ԶԱՍԱՆ Մ. ԵՈՒՄԷՖ, որ հեղինակն է «Յողին Եղբայրակցութիւնը» խորագրով հեռուստացոյցի հաղորդաշարին, գրած է. «Թուրանական թուրքերը բիրտ ուժի տեսակներ կիրարկեցին տարածաշրջանի ժողովուրդներուն դէմ, եւ անոնց շարքին հայ հին ժողովուրդին դէմ: Բիրտ ուժի տեսակներ, որոնք խորթ են մեր տարածաշրջանի ժողովուրդներուն: Եւ որովհետեւ մենք ալ



ճաշակեցինք այդ բիրտ ուժին զուլումը, եղբայրացանք հայ հին ժողովուրդին հետ, որ տարագրուեցաւ իր հայրենիքը եղող Պատմական Հայաստանէն եւ ենթարկուեցաւ ամենաբիրտ տեսակի ցեղային մաքրագործումի: Իսկ սուրիացի մարդը դեմ է ջարդերուն, ով ալ ըլլայ ջարդուողը կամ ջարդողը, մանաւանդ երբ ջարդուողը հին խաղաղասեր ու ժրաջան ժողովուրդ մըն է՝ մեր եղբայրը»: («Հողին Եղբայրակցութիւնը» հաղորդաշարին բեմադրիչն է Նաժտէթ Անզուր):

ԱՏՈՆԻՍ. «Հայ հին ժողովուրդի մեկուկէս միլիոնին դեմ գործուած Ցեղասպանութեան 70-րդ տարելիցը կը զուգահիսի աւելի քան 35-րդ տարելիցին՝ այն շարունակական ջարդերուն, արաբական գետնի վրայ, Ներառեալ Լիբանանի, ձեռամբ Սիոնիզմին՝ ուղղակի կամ փոխանորդի միջոցով: Այսպիսով իրարու կը միանան՝ արաբը իր ներկայով, եւ հայը՝ իր պատմութեամբ, եւ այս միացումէն կը յառաջանայ հասարակաց մարդկային կենդանի վիճակ մը անոնց միջեւ՝ մշտատես յեղափոխութիւնը ընդդէմ Չարիքին խաւարին, ստեղծելով այն գաղափարական լոյսը, որ կ'ազատագրէ մարդը հոգեւէն, եւ անոր առջեւ կը բանայ հորիզոնները: Իսկ ես՝ հաղորդակից կ'ըլլամ հայ ժողովուրդին հետ, զգալով անոր անդոհանքը այս տարելիցին դիմաց, որ մաս կը կազմէ իմ ալ հոգիիս: Եւ ես վստահ եմ, որ այս ժողովուրդը թանկագին ու մեծ ներդրում մըն է այս մարդկային ստեղծագործ շրջապատին, որ կը մարտնչի ի խնդիր ժողովուրդներու յառաջդիմութեան ու ազատագրութեան»:

ԷԼԻ ՖԸՐՉԼԻ. «Գուցէ՛ հայոց զանգուածային ջարդերէն ու բռնագաղթէն բխած Հայ Հողային Դատը, առաջին գիծին վրայ կը գտնուի աշխարհի բոլոր արդար դատերուն: Միջազգային Իրաւունքը՝ իրաւագրկեալ ժողովուրդներուն կու տայ իրաւունքը վերադառնալու իրենց բռնագրաւեալ հայրենիքներուն, եւ՝ հայրենի հողին վրայ ազատօրէն ինքնորոշուելու, նաեւ՝ ստանալու համապարփակ հատուցում, բարոյական, նիւթական եւ աշխարհագրական: Հետեւաբար շատ չըլլար, երբ հայերը Թուրքիայէն ստանան այս երեքը: Անշուշտ, 1.5 միլիոն հայերու կորուստը կարելի չէ հատուցել ոչ մէկ գումարով...: Սակայն, միայն հայրենի հող վերադարձով կրնայ հաւանաբար հատուցուիլ, ինչ որ կը մնայ՝ կարելին»:

ՍԱՅԻՏ ԱԲԸԼ. «Պէտք չէ սպասել Արեւմուտքի մեծ Տերութիւններու որոշումին, արդար իրաւունքը տալու համար Հայ Ազգին, որ սատարած է մարդկային քաղաքակրթութեան, բոլոր մարզերուն մէջ անխտիր: Այլ՝ Հայկական Համաժողովրդային ճակատամարտ մըն է, որ պիտի պարտադրէ Թուրքիոյ որոշումը՝ բռնագրաւեալ հայրենիք վերադառնալու, եւ հոն՝ վերահաստատելու ի՛ր գերիշխանութիւնը, ի՛ր պատմական հողին վրայ: Եւ՝ ասիկա նուաճում մը, շահ մը պիտի ըլլայ մարդկային քաղաքակրթութեան համար»:

Արդեօք՝ մեր հանճարեղ կամ մեծատաղանդ, կամ ամբողջական-օրկանական հայ, կամ համամարդկայնական բանաստեղծներէն՝ Չարենց, Թումանեան, Վահան Տէրեան, Համօ Սահեան, Կապուտիկեան, Սեւակ, Վահան Թէքէեան, Վահագն Դաւթեան եւ Գեորգ Էմին, ո՞վ անբաւարար պիտի գտներ արաբ՝ սուրիացի եւ լիբանանցի Ատոնիսի եւ Սայիտ Աբըլի այս խօսքերը: Եւ մեր հեղինակաւոր իրաւագետներէն՝ Դոկտ. Փրոֆ. Եուրի Բարսեղեան, Դոկտ. Փրոֆ. Տիգրան Պոյաճեան, Դոկտ. Փրոֆ. Շաւարշ Թորիկեան եւ Դոկտ. Ռուբէն Պօղոսեան, ո՞վ պակասաւոր պիտի գտներ լիբանանցի իրաւագետ եւ Լիբանանի խորհրդարանի փոխ-Նախագահ արաբ Էլի Ֆըրզլիի այս խօսքերը՝ Հայ Հողային Դատին մասին...:



---

Եւ արդեօք՝ մեր մաքրակրօն «ճանաչումապաշտ»ները պիտի չնախանձէի՞ն այս խօսքերը գրող արաբ մտաւորականներուն, եւ պիտի չամաչէի՞ն անոնց դիմաց, եթէ՝ այս 2020 թուականին ալ, երեք դարադարձերու տարուան մէջ ալ՝ մնալու ըլլային «ճանաչումապաշտ»...:

Հեռու չեն արդէն 2020 թուի Օգոստոսի 4-ն ու 10-ն եւ Նոյեմբերի 22-ը: Որո՞ւն կը սպասեն. Կօտոյին... որ երբեք պիտի չգայ...:

Ժամանակը կը սուրայ. մեզ չի սպասեր. մենք պարտինք հետեւիլ անոր: Որպէսզի՝ գալիք սերունդները չողբան մեզ՝ Յիմար Կոյսերս...:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

23 Մարտ 2020

## Տեսակէտ

### ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԵՒ ՄԵՆՔ



«Ժողովուրդ մը դագաղին մէջ

Ու դագաղը Ալլահին բեր

Եւ չընդհատուող, չվերջացող

Անօրինակ թաղման թափօր...»

Պետրոս Յերեան

Մովսէս Ս. Յերկելեան, Չալքա,  
Լիբանան 27 Մարտ 2020

Սիրելի ընթերցող՝

Ես ո՛չ համաճարակաբան եմ եւ ոչ ալ բժիշկ: Յոգեբան ալ չեմ: Եւ բնականաբար իմ նմաններուն վերապահուած չէ համաճարակներու մասին կարծիք տալ կամ խրատաբանութիւն ընել, որուն ի սկզբանէ չեմ հաւատացած: Սակայն իբրեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի անդոհանքը ապրած մարդ, կրնամ անդրադառնալ վախի եւ խուճապի մասին, որոնցմէ կը տառապին այսօր մարդկային հսկայական զանգուածներ:

Անձնապէս այս հարցին անդրադառնալու ոչ ծրագիր ունէի եւ ոչ ալ տրամադրութիւն: Առիթը ներկայացաւ երբ Սեւակ Տումանեանի դիմատետրի Էջին վրայ, պատահաբար անգամ մը եւս ընթերցեցի եղբօրս՝ Պետիկի վերոյիշեալ քառեակը, որ թէեւ գրուած է Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժնդակ օրերուն, սակայն այսօր եւս խիստ ժամանակակից կը հնչէ, յատկապէս ձեզի ծանօթ կարգ մը երկիրներու պարագային: Այն օրերուն երբ արեւմտեան Պէյրուսի վիճակը անտանելի դարձաւ եւ «Ազդակ»ը, իր անձնակազմով հարկադրաբար տեղափոխուեցաւ Պուրճ Յամլուտ, Պետիկը չեկաւ Արեւելեան Պէյրուս, որ համեմատաբար աւելի ապահով շրջան կը համարուէր: Երբ հեռաձայնեցի իրեն (դժուարութեամբ կրցայ կապուիլ հետը) եւ պնդեցի որ անպայման մեր կողմը անցնի, մանաւանդ որ «Ազդակ»ի մէջ ալ պետք ունէին իրեն, ան յամառեցաւ առարկելով, թէ «Անգամ մըն ալ երբ առիթը պիտի ունենամ պատերազմի մէջ ըլլալու: Կը մնամ «Սպիտակ Տունը», ակումբի տղոց հետ, որոնց կեանքը նուազ թանկ չէ քան իմս»:

Սիրելի ընթերցող՝ Պետիկի տուած պատասխանը թող չզարմացնէ քեզ: Այդ օրերուն երբ կուրօրէն նետուած ռումբերը մահ ու աներ կը սփռէին ամենուրեք ու ամէն վայրկեան, (իմ սերունդի տղաքը կրնան վկայել այս մասին) մենք ոչ միայն ընտելացած էինք պատերազմական վիճակին, այլեւ մտերմացած՝ մահուան հետ: Վախի ու անդոհանքի սահմանները անցած էին, որովհետեւ փորձը ցոյց կու տար որ տազնապահար ըլլալն ու խուճապի մատնուիլը ոչ օգուտ կը բերէր եւ ոչ ալ հարցեր կը լուծէր: Այսօր թէ վտանգի տեսակն ու տարողութիւնը եւ թէ բնոյթը տարբեր են: Յարցը միջազգային է, մահուան վտանգը շատ աւելի նուազ ու պաշտպանուիլը



համեմատաբար աւելի հեշտ ու դիւրին: Այնպէս որ կարիք չկայ տաճնապը անդոհանքի վերածելու եւ խուճապի մատնուելու:

Եկէք փիլիսոփայօրէն մօտենանք հարցին եւ ընդունինք որ այս մէկը թէև պարտադրուած սակայն հետաքրքրական ապրելաձեւ մըն է ի վերջոյ, եւ գուցէ նաեւ «անհրաժեշտ» փորձառութիւն մը մեր կեանքի մէջ: Այո՛ «Անգամ մըն ալ ե՞րբ առիթը պիտի ունենանք նման անախորժ ու անորոշ կացութեան մէջ ըլլալու»: Մեզմէ իւրաքանչիւրը ու՛ր ալ գտնուի այսօր հարակադրուած է զգոյշ ըլլալու եւ սահմանափակելու կեանքի վայելքներն ու զրկուելու՝ առօրեայ հաճոյքներէն: Արդեօք արժե՞ այսքան տաճնապի մատնուիլ եւ կամ ենթարկուիլ ընկճախտի սահմոկացուցիչ վիճակին: Մասնագետները կ'ըսեն թէ խուճապի մատնուելու հիմնական պատճառներ չկան, որովհետեւ այս համաճարակը ներկայացուածին չափ վտանգաւոր ու ճակատագրական չէ համեմատած նախկիններուն: Նկատի առէք որ ընկճախտը շատ աւելի վնաս կրնայ պատճառել անհատին քան անոր պատճառը հանդիսացող համաճարակը: Թէեւ իւրաքանչիւր անհատ տարբեր ձեւով, տարբեր տարողութեամբ ու տարբեր տրամաբանութեամբ կը դիմագրաւէ ու կը հակադարձէ տիրող համաճարակային կացութեան, այնուամենայնիւ հարկաւոր է ընդունիլ ճշմարտութիւնը ու գործակցիլ իշխանութիւններու հետ:

Ինդիրը այն է թէ բոլոր տեսակի լրատուամիջոցները հակամետ են շատ աւելի ժխտական լուրեր տարածելու քան՝ դրական: Յաճախ կը չափազանցեն նաեւ անոնք: Այս մէկը նորութիւն չէ, այլ լրատուամիջոցներու նկարագրին մաս կը կազմէ կարծէք: Այս պարագային, Չինաստանի համաճարակի վրայ հակակշիռ հաստատած ըլլալու, ապաքինուածներու եւ կամ յայտնաբերուած դեղամիջոցներու մասին շատ աւելի նուազ կը խօսուի քան՝ համաշխարհային գետնի վրայ արագօրէն տարածուող աղէտի մասին: Միայն մէկ անգամ լսեցի թէ համաճարակները հսկայական աւեր պատճառելով հանդերձ, ժամանակի ընթացքին կը տկարանան ու ի վերջոյ կը մարին: Այդպէս եղած է ամբողջ պատմութեան ընթացքին: Ինչո՞ւ կը յիշուին ու կը շեշտուին համաճարակներու գործած հսկայական աւերներն ու մարդկային կորուստները եւ հանգամանօրէն ու ամենայն լրջութեամբ չեն քննարկուիլ անոնցմէ ստացուած դասերն ու մանաւա՛նդ պաշտպանուելու ժամանակակից միջոցներն ու ձեւերը, որոնք աւելի յոյս ու կորով պիտի ներշնչէին ժողովուրդներուն: Դռռես քիչ առաջ հաղորդեցին, որ ոչ միայն շաբաթէ մը ի վեր Չինաստանի ժողովուրդին մէջ նոր վարակում չէ արձանագրուած. այլեւ ամենակարելորդ համաճարակի կեդրոնը հանդիսացող Ուհան քաղաքի «Մեթրոն» սկսած է գործել եւ ժողովուրդը ազատ շարժելու իրաւունք ստացած է: Իսկ Իտալիոյ պարագային մահացածներու կողքին հազարաւոր բուժուողներ կան, որոնց մասին գրեթէ չի խօսուիր:

Առ այդ կ'ուզեմ տեղեկացնել որ հին աշխարհի ժողովուրդներէն շատեր պաշտպանուելու համար համաճարակներէ փորձառաբար ձեռք բերած էին միջոցներ: Օրինակի համար Յին Եգիպտական բժիշկները, մարդուժի առողջութիւնը երաշխաւորելու, յատկապէս համաճարակներէ պաշտպանուելու համար, նախ՝ իւրաքանչիւր ստրուկի վիզէն պճեղ մը սխտոր կը կախէին եւ ապա առատօրէն սխտոր կը կերցնէին անոնց: Այս պատճառով Նեղոսի զոյգ ափերուն ամենէն շատ սխտոր կը ցանէին, որովհետեւ հազարամեակներու Փարաւոնական այդ հսկայ մշակոյթի զարգացումն ու գոյատեւումը պամանաւորուած էր ստրուկներու առողջութեամբ: Իսկ հնդիկները մինչև հիմա, չափազանց շատ կծու կ'ուտեն (կ'օգտագործեն բոլոր տեսակի կծու բանջարեղէններն ու համեմները) վարակիչ հիւանդութիւններէ պաշտպանուելու համար: Նոյն նպատակով Վերածնունդի շրջանին Ֆրանսայի թագաւորն ու թագուհին քնանալէ առաջ ոսկեայ գեղեցիկ տուփիկներու մէջէն կը հանէին պճեղ մը սխտոր, կով կու տային եւ ապա միայն կը մտնէին անկողին:



Իմ գիտակից ընթերցող, յանկարծ չկարծես թէ հաւակնութիւն ունիմ հաւատալու թէ սխտորը եւ կամ կծու բանջարեղէններն ու համեմները համաճարակները բուժելու եւ կամ վերացնելու յատկութիւն ունին: Ընդհակարակը գիտականօրէն ապացուցուած չէ այս մէկը, թէեւ շատեր կ'ընդունին որ կծու բանջարեղէններն ու համեմները օգտակար են, եւ հնարաւոր է նաեւ որ մարդու դիմադրողականութիւնը աւելցնեն:

Բոլոր պարագաներուն համաճարակներու պատմութիւնը լեցուն է աղետաբեր հետեւանքներով, նաև՝ հոգեբանական առումով: Դեռևս մօտիկ անցեալին, Եղեռնէն ետք, Հայաստանի անկախութեան օրերուն իսկ, հայրենի ժողովուրդը դիմագրաւեց «թիֆոյիտ»ի մահաբեր ու համատարած համաճարակ մը, որուն զոհ գնաց նաեւ Արամ Մանուկեանի նման հերոս մը: Իսկ մուսալեռցիք երբ եկան ու հաստատուեցան Այնճար, տարածաշրջանի ճախճախուտ ու վատառողջ մթնոլորտի հետեւանքով բռնուեցան «մալարեայ»ի սարսափելի համաճարակին, որուն վտանգը այնքան մեծ էր, որ մեր ծնողները կը վկայեն թէ կը պատահեր որ օրական տասնեակներով մարդ կը թաղէին: Այն ատեն չկային պետք եղած բուժման կեդրոններն ու դեղամիջոցները եւ այդ պատճառով ալ «թիֆոյիտ»ն ու «մալարեան» շատ աւելի խոցելի էին քան՝ մերօրեայ «քորոնա» կոչուածը: Երկու պարագաներուն ալ թէեւ բազմաթիւ զոհեր եղան, սակայն ժամանակը իր դերը կատարեց, ժողովուրդը կազդուրուեցաւ ու գոյատեւեց: Կ'ըսեն թէ այս մէկն ալ վաղ թէ ուշ պիտի մարի, սակայն կը շահի այն հասարակութիւնը որ առանց խուճապի կը դիմագրաւէ կացութիւնը եւ նուազագոյն զոհերով դուրս կու գայ միջազգային տարողութիւն ստացած այս աղետէն:

Հայաստանը (ինչ որ տեղ նաև Լիբանանը), այսօր իրենց կազմակերպուածութեամբ աւելի լաւ պաշտպանուած կը թուին ըլլալ, քան՝ եւրոպական շարք մը երկիրներ:

Հակառակ անոր որ երեւութապէս աշխարհը սկսած է վերածուիլ «չընդհատուող ու չվերջացող անօրինակ թաղման թափօր»ի, եկէք խնայենք մեր ցիղերուն, մեր առողջութեան, նախ անոր համար որ վտանգն ու աղետը այնքան մեծ ու մտահոգիչ չեն թուիր ըլլալ, ապա ի նկատի ունենանք որ զգուշութիւնը վախկոտութիւն չէ եւ ոչ ալ համարձակութիւնն ու մասնագիտական թելադրանքները չգործադրելը քաջութիւն:

## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



#### ԼՈՅՍ ԶՐԱՇՔԻՆ

Կայծ աստուածային որ բռնկեցար,  
Յողեղէն կաւիս մէջ կրա՛կ դարձար,  
Յետոյ բառ հազար հրեղէն շունչով,  
Անօթս նուաստ օճեցիր լոյսով...  
Յրա՛շք պահ էր սա երկնային հուրքով,  
Որ արարչական կամքով մը վերին  
Բառ ու տող շարեց խոնարհ իմ գրչին՝  
Խոհերով լուսէ, բիւր յոյզերով բորբ..  
Ես ընդունեցի պարգեւն այս վերին  
Որպէս հոգիի ճառագայթ անգին,  
Որ լուսաւորեց միտքս ու հոգիս,  
Ընծայեց ինձի հա՛մը երկնքի...  
Կ'օրինեմ քե՛զ, հըրա՛շք, որ տուիր թեւեր  
Ճախրելու ազատ դէպ՝ արշալոյսներ,  
Բռնկումներես բիւր լոյսեր վառել,





---

Չանոնք մատուցել սիրով հրակէզ...

3/3/2018

.....

ՏՈՂԻՍ

Մերթ սիրտերու անթրո՛ց դարձար,

Կրա՛կ ու բո՛ց բռնկեցիր,

Մերթ ալ անուշ հովիկ եղար,

Սրտի դո՛ղ ու շոյանք տուիր..

Մերթ ժայթքեցար՝ հրաշէ՛կ լաւա,

Ընդերքներես անքննելի,

Մերթ խոկմանցս խորան եղար,

Խոհով ծանր ու հանդարտիկ...

Մերթ սիրոյ հրա՛յրք, հրակէզ կարո՛տ,

Մերթ ալ մորմո՛ք մը ցաւատանջ

Յրավառեցին ոգիս վառման,

Դրոշմեցին տող հրաբորբո՛ք..

Մերթ լռութի՛նն դարձար խաղաղ,

Տենդով, կայծով լուսարարման,

Մերթ ալ եղար հոգեմրրի՛կ,

Տազնապեցար ալի՛ք-ալի՛ք..

Մերթ ինդացիր, ուրախացար

Բերկրանքով մը անծի՛ր, անա՛փ,

Մերթ ալ լացիր արցո՛ւնք-արցո՛ւնք

Կարծես չկար տանջանքիդ բոյժ...

Յետոյ եղար աղո՛թք լուսէ

Առ Բարձրեալը Ամենակալ,

Խղճիս խորէն գրոյց անեղծ,



---

Խոստովանանք մ'անչափ անկեղծ...

Եւ միշտ երա՛գ մ' հուրհրատեց

Վառ տեսիլքով մը լուսեղէ՛ն,

Ու չթողուց որ իյնայի

Յուսալքման բաւիղին մեջ...

21/3/2020

.....

ԱԶԳ ԻՄ ԼՈՒՍԷ

Պիտի կառչիս քու սուրբ հողիդ,

Ուր հողմերը երգը ունին

Բիւր դարերուդ վսեմական,

Շաչիւնը գոռ ու պատգամը

Աստուածներուն արմենական,

Որ հզօր եղան գերթ Մասիսը...

Պիտի կառչիս քու սուրբ լեզուիդ,

Որուն կարկաչն ու որոտը

Չանցեր է ժամ- ժամանակը,

Շառաչեր է ահեղավազ

Չերթ գետերդ յորդահոսան

Ու սպառնացեր նենգ ոսոխին...

Պիտի կառչիս քու սուրբ լեռան,

Որուն վըրայ Նոյն է իջեր,

Դաշինք կնքեր խաղաղութեան՝

Աստուածներուն ու մարդուն հետ

Եւ սկիզբ դրեր Նոր պատմութեան,



---

Ուր հայն իր խօսքն դեռ պիտ' ըսէ...

Պիտի կառչիս արմատներուդ,  
Որոնք խորն են, զերթ աշխարհը.-  
Աւիշով նոր ու կենսայորդ  
Պիտի պայթին ծիւեր, բողբոջք,  
Պիտ' նորոգեն հին աշխարհը`  
Ծաղիկներով արեւայորդ...

3/2/2020

.....

ԱՍՏՈՒԿԾՆԵՐՈՒՆ ՃԱՄԲԱՆ

Ինչքի ու փառքի պսակը թողած,  
Բառի ու գիրի ումպով արբեցայ,  
Շունչս ու հոգիս անոնց մէջ ցաթեց,  
Կա՛ր-կա՛ր հոսեցաւ սիրալոյսի պէս..

Բառի ու գիրի դարը անցած էր,  
Գովազդի աղմուկն էր լոկ տիրական,  
Բայց հոգին կու լար սովէն կարեմէր,  
Անոր մորմոքին ո՞վ պիտ' տար ականջ...

Նիւթի ու շահի շուկան կը գոռար  
Ու կը լռեցներ խուլ ձայնը խիղճին,  
Ո՞վ ձայն պիտի տար այդ հեկեկանքին  
Ու ես ունկնդիր այդ կանչին դարձայ..

Իմ մէջ ծաղկեցան լոյս անդաստաններ,



---

Բառի ու խօսքի բիւր- բիւր հնչիւններ,  
Ցաւին արցունքը, տառապանքի հեւքն  
Գտան բալասան, հրաշք դարման ու դեղ...

Բառս ու գիրս` քաղցրահամ գինի,  
Չիս աստուածներուն վեհ գիրկը տարաւ,  
Լոյս արբեցութեամբ վարարեց հոգիս,  
Բիւր արշալոյսներ իմ մէջ ծագեցան...

13/3/2018

.....

ԴԻՄԱԿՆԵՐ

Դիմակներ ինդուն,  
Դիմակներ տմոյն,  
Դիմակներ ժպտուն,  
Դիմակներ տխուր,  
Քիչ մը ամէն կողմ  
Կը խօսին անխօս,  
Բարբառէն անբառ,  
Կու լան անարցունք,  
Կը նային անաչք,  
Լսեն անականջ,  
Կ'ուտեն անբերան,  
Խորհին անուղեղ,  
Կը զգան անզգամ,  
Կը սիրեն անսեր,  
Եւ չես ալ գիտեր`  
Մա՞րդ են, թէ՞ ռոպոթ,



Ունին՞ սիրտ զգացող,  
Կամ մի՞տք մտածող,  
Յոգի՞ թեւածող,  
Թե՞ լոկ սուտ սարք ես,  
Գոծի՞ք սարքովի,  
Անինքնութի՛ն ես,  
Մարմի՛ն անհոգի...

9/1/2017

.....

### ՅԱՆՈՒՆ ՎԱՂՈՒԱՆ

Գարնան ծիլե՛ր ու բողբոջնե՛ր,  
Գարնան ծաղկո՛ւնք բուրումնաւետ,  
Վարարեցէ՛ք սիրտերն մարդկանց,  
Չարթօնքով ձեր սիրածորան...

Չարն ու նենգը, ժահրը դժնէ  
Յեռանան ու տեղ չգտնեն՝  
Լոյսին դիմաց գարնանաւետ,  
Որ օծեր է դաշտ ու անդեր...

Ողբն ու կական թող նահանջեն,  
Գարուն բացուի սիրտերուն մէջ,  
Երգէ երգը թռչուններուն,  
Կարկաչահոս աղբիւրներուն...

Մարդը յոգնած, տառապակոծ  
Վերազարթնու նոր եռանդով,



---

Յոգւոյն, սրտին ջահը վառէ

Գարնան հրաշքով արեւահեւ...

Ու աշխարհը թող բռնկի

Սիրոյ տենդով գարնանային,

Սիրոյ հունտեր թող սերմանուին

Յանուն վաղուան արդար հացին...

22/3/2020

.....

ՊԻՏ' ՄԱՐԴԱՆԱՍ

Ուրկէ՞ եկաւ այս ժահրն անտես,

Որպէս սարսափ մարդ էակին,

Անկախ անոր գոյնէն, ցեղէն,

Իր պատկանած դասակարգէն,

Իր ունեցած դիրքէն պատիր,

Վաստակէն ու պաշտօններէն...

Գլեց անցաւ պատնէշ, սահման

Եւ դամոկլեան սուրի նման՝

Սպառնայ ջնջել մարդկութիւնը,

Անոր ստեղծած բիւր գանձերը...

Եւ խեղճացուց, անզօրացուց

Մարդը ունայն, մարդկութիւնը,

Որ գիտութեամբ ահագնացունց

Կարծեր ըլլալ բախտին տէրը,

Ուժով հարբած ու գինովցած

Կարծեր տիեզերքն նուաճած ըլլալ...

Դեռ կը սպառնար իր նմանին



Եւ կը խժռէր տկարն անկար՝  
Որ ունենար դեռ ակելին  
Իշխէր, տիրէր գերթ բռնակա,  
Ազատութեան սուտ քօղին տակ՝  
Ստրկացներ երկիր ու ազգ...  
Ժահրը եկաւ յանկարծօրէն  
Սթափեցնելու մարդը անսեր,  
Տոյց տալու թէ ո՞վ է մարդը՝  
Մայր բնութեան ոյժին քովը...  
Կենաց մահու սահմանն է, մա՛րդ,  
Պիտ՝ մարդանաս կրկին անգամ,  
Պիտ՝ պայթարիս միացեալ ոյժով՝  
Ժահրին դեմ այս ամենակուլ...  
Եւ յընթացս պիտի գտնես՝  
Կորած, կորսուած հոգիդ վսեմ,  
Խիղճդ ի քուն պիտ՝ արթննայ՝  
Խոր թմբիրէն սիրտդ պատած,  
Կարեկցանքով պիտի փարի  
Իր նմանին ու աշխարհին...  
Ու պիտ՝ յաղթես ժահրի թոյնին,  
Ու յաղթելով պիտ՝ ամրանաս,  
Վերստին պիտ՝ արժեւորես  
Քու կոչումդ Աստուածային,  
Վերագտնես Նախաստեղծեան  
Պատկերդ ջինջ Աստուածակերպ...  
Այլ ելք չունիս, ո՞վ մարդ անգին,  
Վերջին պահդ է զգօնութեան,





---

Չգաստութեան ու սթափ մտքի,

Եթէ կ'ուզես պատուով ապրիլ,

Տերը դառնալ ճակատագրիդ

Ու կոչումիդ վսեմական:

22/3/2020

.....

**ՉԱՐԹՕՆՔԻ ՏԵՍԻԼՔՈՎ**

Եւ երբ ժահրերը հեռանան,

Պայծառ արեւ պիտի ծագի,

Մարդիկ պիտի գրկեն զիրար,

Նոր աշխարհ մը պիտի ծնի...

Ծառ, ծաղիկներ բոյր ու թոյրեր

Պիտ' տարածեն սիրահամբոյր,

Չեփիւռն մեղմիւ պիտի շոյէ

Նոր աշխարհը նոր քնքանքով...

Արե՛ւ, երկի՛նք պիտի շողան

Ճանաչներով գարնանավառ,

Նախաստեղծեան փայլով լուսէ

Պիտ' ջերմացնեն մարդկանց սրտերն...

Նոր աշխարհը դրախտահե՛լ`

Ա՛լ մաքրուած իր մեղքերէն,

Պիտի կանչէ նոր մարդացման,

Բարւոյն, սիրոյն լուսարարման...



Յոգիս կարօտ Նոր աշխարհին

Նոր տեսիլքով ոգեշնչուի,

Մի՛ ուշացներ, ՏԷ՛ր իմ Գթած,

Նոր զարթօնքը արեւափառ...

20/3/2020

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### ԻՆՉՈՒ ՊԱՅՔԱՐԻԼ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ



Չայերենը, ինչպես քաղաքակրթութիւններու բացուող որեւէ լեզու, իր պատմական զարգացման ընթացքին երբեք չէ գոցած իր դուռը օտար բառերու դիմաց: Մտաբերենք 5-րդ դարուն կատարուած Աստուածաշունչի թարգմանութիւնը, թարգմանական հսկայ աշխատանքը, մեր գրաւոր մշակոյթի Ոսկեդարը, Թարգմանչաց տօնը: Չայերենը հարստացաւ այլ լեզուներէ որդեգրուած բազմաթիւ բազմաթիւ բառերով, եւ այսօր ոչ մէկս կը մտածէ այդ բառերը օտար համարել, ինչպէս՝ մագաղաթ, եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկոս, արեղայ, սկիհ, մատուռ, կաթողիկէ, կիրակի, մարտիրոս, սաղմոս, սքեմ, պատրիարք, քրիստոնեայ եւ այլն, եւ այլն: Բաւարարուեցանք միայն եկեղեցական բառերէն շարք մը թուելով:

Քաղաքակրթութիւնները իրարմով կը զարգացան, լեզուները՝ իրարմով կը հարստանան...: Այսպէս է կարգն աշխարհի: Մերժել՝ կը նշանակէ ճահճանալ,

աւագախրիլ ու անհետանալ...

Բայց ներկայիս, հայերէնի երկու գրական տարբերակներու առկայութեան պայմաններուն մէջ, օտարաբանութիւնը մեզ աւելի տարանջատող բնոյթ կը կրէ, երկու գրականներուն միջեւ եղած տարածութիւնը անդունդի կը վերածէ: Յոս՝ ամբողջ խնդիրը կը ծագի անկէ, որ աշխարհաբար հայերէնի երկու ճիւղերը այսօր չունին շարք մը բաղաձայն տառերու հնչիւնական նոյնութիւնը (բ-պ, գ-կ, դ-տ, ջ-ճ, ձ-ծ): Այդ բաղաձայնները տարբեր կերպով կ'արտասանեն արեւելահայերն ու արեւմտահայերը: Չայերէնեան բոլոր բառերուն պատկերը մենք կը պահենք նոյնութեամբ, այսինքն կը գրենք, ինչպէս որ գրուած էին գրաբարի մէջ՝ բաղ, պատ, պանիր, բաժին, գարի, կար, դեր, տեր, տուն, դուք, ծայր, ձի, ջամբել, ճամբել: Գրաւոր խօսքի մէջ երբեք խնդիր չունինք (անտեսելով նոր ուղղագրութեան ստեղծած ճեղքը), նոյն հայերէնն է, բայց արեւելահայը այդ բառերը կ'արտասանէ ուրիշ առոգանութեամբ, արեւմտահայը՝ ուրիշ: Մենք գիրար լսելու ատեն կրնանք քիչ մը դժուարութեան հանդիպիլ, բայց գրաւոր խօսքի մէջ՝ երբեք:

Անշո՛ւշտ, եթէ մեր գրաւոր լեզուն խճողուած չըլլայ օտարաբանութեամբ:

Այո՛, բոլորովին տարբեր է օտար բառերու պարագան: Օտար բառերու լայն կիրառումը եթէ բարիք կը նկատուի մէկ գրական տարբերակ ունեցող լեզուներուն համար, ապա չարիք է մեզի համար: Արեւելահայը օտար բառը կը տառադարձէ ըստ իր հնչիւնական համակարգին, արեւմտահայը՝ իր. մեջտեղ կու գայ, որ նոյն բառը հայերէնի մէջ երկու պատկեր կ'ունենայ՝ պանք-բանկ (դրամատուն), թերորիսթ-տեռորիստ (ահաբեկիչ), տեքոր-դեկոր (գեղազարդում), փարթի-պարտիա (կուսակցութիւն): Նոյնն է արեւելեան լեզուներէ ներմուծուած բառերու



պարագային՝ ղուրպան-ղուրբան, պաճանախ-բաջանախ, տոլմա-դոլմա, սապուն-սաբուն, ճահիլ-ջահիլ: Հարցը կը բարդանայ, երբ իւրաքանչիւր տարբեր լեզուներէ կը ներմուծենք այդ բառը, մէկս ռուսերէնէ, միւսս՝ անգլերէնէ. քորրափշըն-կոռուպցիա (փտածութիւն), սոցիոլոժի-սոցիոլոկիա (ընկերաբանութիւն), օպժեթիլ-օբեկտիլ (առարկայական), սապժեթիլ-սուբեկտիլ (ենթակայական):

Աւելի կը բարդանայ, երբ նոյն բառին փոխատու լեզուները երկուքէն աւելի են, այսինքն հայերէնին անցած է տարբեր լեզուներէ. աքշըն-աքսեոն-ակսեոն-ակցիա, սիմենթ-ցիմենտ-չիմենթ: Ասիկա խնդիր կը ստեղծէ ոչ միայն երկու գրականներուն միջեւ, այլ նաեւ միեւնոյն գրական տարբերակին մէջ: Եթէ երկէ արեւելահայերէնը ռուսերէնի ասպատակութեան ենթակայ էր, այսօր անոր հետ նոյն ուժգնութեամբ հոն կը գործէ անգլերէնը, կրնայ ֆրանսերէնն ալ ըլլայ, կրնան սպաներէնը, իտալերէնը, ճափոներէնը, չինարէնը եւ այլ լեզուներ եւս մտնել մեր տուն: Լեզուն արշակաւան մը կը դառնայ:

Ու մէջտեղ կու գայ, որ մեր երկու գրական լեզուները իրարմէ կը հեռանան այնքան, որ արեւմտահայը այսօր չի կրնար կարդալ արեւելահայ տպագիր մամուլի որեւէ մէկ էջ, չի հասկնար տեսալսողական հաղորդումները...: Հոս առաւել եւս կը խախտի մէկ ազգ, մէկ հայերէն մեր հաւատամբը: Հեռու չէ նաեւ այն օրը, երբ Արեւմուտք ու Ամերիկաներ գաղթած մեր արեւելահայ հայրենակիցներու յաջորդ սերունդը, հայերէնախօս ըլլալով հանդերձ, դժուար հասկնայ հայաստանեան հայերէնը:

Բայց հայերէնը ունի հրաշալի ճկունութիւն մը, ունի բառակազմական լայն կարելիութիւններ այդ բառերը հայերէնի վերածելու: Հայերէն կազմութիւնները շատ աւելի ընկալելի կը դարձնեն հասկացութիւնը, քան օտար բառերը: Օրինակ՝ Երեւանի մայթերէն անցնելու շատ կը հանդիպիմ ստոմաթոլոգիա բառին, ի՞նչ կ'ըսէ այս բառը այն մարդուն, որ ակռայի կամ լինտերու ցաւէ կը տառապի, ոչ միայն արեւմտայերէն, այլեւ արեւելահայերէն խօսողին համար, օրինակ՝ պարսկահայուն: Ոչինչ: Եթէ անոր փոխարէն գրուած ըլլայ ատամնաբոյժ, նոյնիսկ այդ բառին առաջին անգամ հանդիպողն ալ պիտի հասկնայ, որ ասիկա ատամը՝ ակռան բուժողն է, իր փնտռած dentist-ը: Հայախօս հայութեան 50 տոկոսին համար ի՞նչ կ'ըսէ հետեւեալ նախադասութիւնը՝ “պացիենտը գտնուում է ինտենսիւ թերապիայում”: Ահաւոր գործ պիտի ըլլայ գտնել, որ պացիենտ բառը իր գիտցած անգլերէն patient բառն է, համբերատար, այսինքն՝ հիւանդ, որ բուժումի ենթակայ է: Եթէ չէք ուզեր նոյնացնել հիւանդն ու պազիենտը, կարելի չէ՞ վերջինիս համար գործածել բուժառու բառը, որ ըսել է բուժուող, բուժում ստացող: Կարելի չէ՞ ըսել “Բուժառուն ենթակայ է ծայրագոյն բուժումի կամ խնամքի”: Խօսքի նպատակը միայն խօսի՞լն է, թէ հասկնալն ու հասկցուիլը:

Օտար բառերու փոխարէն հայերէն համարժեքներ ստեղծելն ու տարածելը միայն լեզուի տեսչութիւններու եւ գիտնականներու գործը չէ, այլեւ իւրաքանչիւր լեզուակիրի՝ գիտակից հայու: Խաղողի հատիկները իրարու նայելով կը կարմրին:

Ասիկա մաքրամոլութիւն չէ, այլ՝

- իւրաքանչիւր հայու գիտակցութեան արտացոլումը:

- քաղաքակրթութիւններուն հանդէպ հայօրէն բացուելու եւ զանոնք որդեգրելու ազգային ներքին պահանջք եւ արժանապատուութիւն;



---

-Մեր երկու գրական լեզուներու միջեւ ստեղծուած տարածութիւնը աւելի չմեծցնելու քաղաքական գիտակցութիւն:

Որովհետեւ լեզուն բոլոր ազգերուն համար ազգային գոյութեան եւ միասնականութեան զէնք է, այդ ճամբուն վրայ՝ քաղաքական մարտավարութեան անփոխարինելի միջոց է:



## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Երջանկութեան առեղծուածը....կը թուի ըլլալ անվերծանելի, իւրաքանչիւր մարդու համար իւրովի...: Ըստ իս, երջանկութիւնը ներքին խորագոյն ԵՍ-իդ հետ, խղճի ձայնիդ հետ հաշտ ու խաղաղ ապրիլն է, ինքնօրէն ազատ ըլլալուն մեջ՝ ներքին թէ արտաքին տեսակաւոր բռնութիւններէ...կեանքի նպատակ գտնելուն եւ անոր հետ ներդաշնակ բովանդակութեամբ ապրիլն է, որ շարունակ քեզ հարստացնէ յուզա-իմացական նորանոր լիցքերով...Երջանկութիւնը էապէս հոգիի որակ է...

.....

Չիս ցաւատանջ կը խոռովեն բոլոր ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ...ինչ ձեւի տակ ալ յայտնուին անոնք...ներագային կեանքէն ներս, թէ անկէ դուրս....Անարդարութենէն կը ծնին քէներն ու պառակտումները, արհմահեղ կռիւներն ու պատերազմները..., որոնք, իրենց հերթին, դուռ կը բանան նորանոր անարդարութեանց, եւ այնպէս կը թուի որ ելք չկայ այս փապուղիէն...: Եթէ իւրաքանչիւր մարդ ծառանար որեւէ անարդարութեան դէմ, անտարբեր չըլլար անոր նկատմամբ, արդարութիւնը պաշտպանէր բարձրագոյն, գուցէ յայնժամ յոյսի եւ լոյսի շող մը ճառագայթեր այս փապուղիէն ներս, եւ մարդը վերջապէս կարենար ազատ շնչել՝ անարդարութեանց գերեվարող շղթայէն ձերբազատ...

.....

Շատ կարեւոր է սորվիլ՝ դատողութիւնը առկախել, շուտ եզրակացութիւններու ջանգիլ՝ մանաւանդ պահի ազդեցութեան տակ, կամ երբ մեր ներքին բաղձանքին համաձայն կ'ընտրենք տուեալ դատողութիւնը...Որքա՛ն առարկայական, անաչառ վերլուծում է պէտք, որքա՛ն կշռադատ սերտողութիւն...ՎԱՐԿԱԾ մը կազմելու համար, միշտ՝ վերաքննելի: Հայերուս մօտ, դժբախտաբար, առկայ է շուտափոյժ եզրակացութեան յանգելու, երեւակայուածը որպէս փաստ ընկալելու հակումը, ինչ որ լուրջ տհասութեան ցուցանիշ է՝ տրամաբանական, գիտական անկողմնակալ մտքի...

.....

Քննադատութիւնը շատ հեշտ է, քանզի սխալագործութեանց բեռը քննադատողը կը բարդէ ուրիշին ուսերուն...Դժուարը, այլեւ շատ աւելի պատուաբերն ու հանրօգուտը՝ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆ Է, որ յատկապէս հայ կեանքին ՄԵԾ ԲԱՅԱԿԱՆ Է...ՈՆԷԷ հայ



իշխանաւորէ, կամ հայ կեանքին մէջ պատասխանատուութիւն ստանձնած ղեկավարէ, տակաւին չեմ լսած ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆԱԼՔԸ, ինչ որ մեծագոյն արժանիք պիտի նկատուէր ի նպաստ իրեն, այլեւ ու մանաւանդ՝ յօգուտ հայ կեանքի ճշմարիտ յառաջդիմութեան....ուր վերջապէս՝ դարաւոր սխալներու կուտակումէն ժանգոտած մեր ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆԻԲԸ պիտի կարենար դէպի յառաջ շարժիլ, փոխանակ թոփելլու միեւնոյն տեղին վրայ...

.....

Շատ սիրած եմ «ժողովուրդ» բառը, որ մեր լեզուին մէջ յատկապէս կը գտնէ իր բուն իմաստը...ժողովուրդ ի հակադրութիւն մասնատուելուն: Բայց նոյն այս հասկացութիւնը չենք կրցած կեանքի կոչել դար ու դարեր եւ մասնատուեր ենք, կոտորակուեր՝ առանձին խմբակներու, առանձին հատուածներու, առանձին կուսակցութեանց, առանձին անձնաւորութեանց....որոնցմէ իւրաքանչիւրը կը դաւանի ԻՆՔ ըլլալ բացարձակատերը ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ: Երանի թէ կարենայիք իսկապէս ԺՈՂՈՎՈՒԻԼ, միաւորուիլ եւ ճշմարտօրէն ԱԶԳ դառնալ՝ միեւնոյն երազով ու տեսլականով, միեւնոյն արժէքներու համակարգով, միեւնոյն ազգային գաղափարախօսութեամբ: Սա չէ՞ մեր բոլոր խնդիրներուն լուծման բանալին:

.....

Մեր մէջ այնքան շատ է ՃԱՆԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ...Կը խօսինք ՀԱՅՐԵՆԻՔԻՆ մասին, բայց արդեօ՞ք Էապէս ու խորապէս կը ճամչնա՞նք զայն....Կը խօսինք ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ մասին, բայց որքանօ՞վ ըմբռնած ենք անոր ՈԳԻՆ, ԷՈՒԹԻԲԸ, խորխորատներէն դէպի բարձունքը սլացող խոյանքը անոր....Կը խօսինք դեռ մեր ՄՇԱԿՈՅԹԻՆ մասին, բայց կը զգա՞նք, ըստ Էութեան, անոր ՇՈՒՆԶԸ, ՀՐԱՅՐՔԸ, ՈԳԵՂԵՆՈՒԹԻԲԸ....ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ այս պակասը կը լրացնենք հռետորական ճառերով, ոչինչ ըսող ամպագորգոռ բառերով յաճախ....ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻԲԸ պիտի Էապէս վերակենսաւորել, վերաշնչաւորել, քանզի առանց ճշմարիտ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ, ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՄԱՆ, ինչպէ՞ս կարելի է ուղի հարթել հայոց պատմութեան երթի, ազգային գոյութեան յարատեւման, զարգացման....Ազգային դաստիարակութիւնը պիտի վերակերտել, վերակառուցել....Սա կարելի է համարել մեր փրկութեան գլխաւոր բանալիներէն կամ թերեւս գլխաւոր բանալին:

.....

Զիս կը զարմացնեն, կը շքմացնեն, կը զայրացնեն այն անձինք, որոնք հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ կը մտնեն՝ ո՛չ թէ անկաշառ ծառայելու, այլ՝ իրենց սեփական անձին համար շահ մը ապահովելու համար....եւ որքան շատ են անոնք....Սա արդի ընկերութեան շահամոլ վարքագիծին ցոլացումն է հայ կեանքին մէջ, որ տակաւ կ'ընդհանրանայ, կը տարածուի....ազգին ծառայելու վսեմ վարքագիծը փոխարինելով՝ ազգէն օգտուելու եւ ազգը շահագործելու տխուր վարքագիծով...Կան նաեւ կազմակերպութիւններ կամ կուսակցութիւններ որոնք կը յաւակնին տիրութիւնը ընել աւանդական Սփիւռքին, իսկութեան մէջ զայն պառակտելով... Եւ եթէ իրենցմէ չես, քեզ ամբողջովին կ'անտեսեն: Սփիւռքը կենսական կարիքը ունի յեղափոխուելու...

.....





Դաժան է կեանքը....Մարդը միշտ ալ առանձին է իր տխրութեան թէ ուրախութեան ժամին....Ո՞վ կը կիսէ ի խորոց սրտի քու ցաւդ, տագնապդ, տրտմութիւնդ թէ ուրախութիւնդ....Պատրանք է հաւատալ որ կա՛յ նման բան...բայց մենք վստահաբար կը թէթեւանք հոգեպէս, պատմելով մեր ցաւը ուրիշին....Իսկ այդ ուրիշը՞....կրնայ քիչ մը ցաւակցիլ, բայց ան երբեք չի կրնար կրել քու ցաւդ...ԵՐԲԵ՛Ք....Մենք պիտի կրենք մեր ճակատագիրը....մենք բեռնակիրներն ենք մեր ճակատագրին...

.....

Երբ մարդոցմէ հիասթափուիս, դուն քեզ խաբուած զգաս, ձանձրոյթը կը պատէ հոգիդ....կ'ափսոսաս վատնուած ժամանակիդ վրայ, տածած հաւատքիդ եւ վստահութեանդ վրայ....Տակաւին, արժանապատուութիւնդ խոր վիրաւորանք կ'ապրի, կ'ընդվզիս, կը զայրանաս նաեւ դուն քեզի, որ միամիտ գտնուեցար, դիւրահաւատ, երախայի մը պէս....Բայց որքան ալ հասունանանք, որքան ալ իմաստնանանք, դեռ մեր մէջ մանուկը պիտի հաւատայ, պիտի վստահի եւ դեռ խաբուի ալ....ՍԱ ՄԵՐ ՀՈԳԻԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ մասին կը վկայէ գերազանցօրէն...

.....

Երբ մէկը մէկուն անարդարէ, ես կ'ըլլամ անարդարուողը...

Երբ մէկը մէկուն անարգէ, ես կ'ըլլամ անարգուողը...

Երբ մէկը մէկուն նուաստացնէ, ես կ'ըլլամ նուաստացողը...

Երբ մէկը մէկուն բարձրացնէ, ես կ'ըլլամ բարձրացողը...

.....

ԻՆՔՉԻՆՔ ԸԼԼԱԸ....երբ այնքան շատ են կեանքի մէջ զանազան դերեր խաղցողներ, դիմակով ներկայացողներ, «թուացեալ»ը իսկականի տեղ դնողներ...երբ ներկայ ընկերութիւնն ալ տեսակ մը կը հարկադրէ մարդ-անհատին իր դերակատարումը յաջողութեամբ խաղալ կեանքի մէջ, ըլլա՛յ որպէս պաշտօնեայ տուեալ ընկերութեան մը մէջ, ըլլա՛յ որպէս պետական գործիչ, իշխանաւոր...եւ այսպէս շարունակ: Եւ այնքան սակաւ են անոնք, որոնք ՀԱՐԱՉԱՍ կը մնան իրենց բուն եութեան, ՀՈԳԻԻՆ...այսպէս կորսնցնելով կեանքի մէջ ամենէն թանկը...

.....

Մեր մեծասքանչ լեզուին՝ ՀԱՅԵՐԷՆԻՆ մէջ են արտացոլուած ազգային մեր հոգեբանութիւնն ու մտածելակերպը, ազգային նկարագիրն ու ինքնութիւնը....Անիկա ե՛լ պատմութիւն է, ե՛լ մշակոյթ, ե՛լ ինքնութիւն...հայ հոգիին ու ոգիին մարմնացումը: Առանց հայոց լեզուին, մենք որոշապէս կը մեռնինք որպէս ազգային ինքնուրոյն դիմագիծ ունեցող ժողովուրդ եւ կը դառնանք անդէմ, անդիմագիծ զանգուած....Ի զուր չէ ըսուած. «Լեզուն ազգի մը հոգին է, կենդանի է այդ հոգին, կենդանի է եւ ազգը, կը մեռնի լեզուն, կը մեռնի եւ ազգը...»...Պահեմք-պահպանենք եւ առաւել պայծառացնենք զայն...քանզի առանց հայոց լեզուի կենսունակ պահպանման, չի կրնար ըլլալ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՆՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ



ՄԷկուն հազար փառք ու պատիւ,  
Միւսին ոչ իսկ նշոյլ ժպիտ,  
ՄԷկուն հազար գովք, գնահատանք,  
Միւսին միայն չար պարսաւանք...

.....

Ազնուութիւնն է մարդուն չափանիշ,  
Թէ հարուստ մարդ ես, դիրք ու դրամ ունիս,  
Կամ աշխատաւոր, համեստ խաւի մարդ,  
Ազնուութեա՛մբ լոկ կրնաս բարձրանալ...

.....

Սրտի զարկը թէ որ խօսէր,  
Սրտի տրոփը թէ բառ դառնար,  
Սուտն ու կեղծը կը վերանար,  
Մարդը կ'ըլլար ա՛յն ինչ որ է...

.....



Եւ հիասթափուած մարդ ԷակԷն,  
Թուղթին հետ ես մտերմացայ,  
Բայց մարդ Էակն Էր որ ԼորԷն՝  
Թափ տուաւ իմ գիրին խոնարհ..

.....

Սիրտս միշտ ալ անվրեպ յուշեց՝  
Բարեկամը իրաւ, անկեղծ,  
Ան միշտ զգաց սուտն ու ճիշդը,  
Ես էի միշտ սխալողը...

.....

Աշխարհն ամբողջ ծուռ է դարձեր,  
Իսկ ես շիտակն դեռ կ'որոնեմ,  
Չին օրերու հեքիաթին պէս,  
Գուցէ զարթնու յանկարծօրԷն...

.....

Չիտուորն ինկաւ, հողը գրկեց,  
Իր արիւնով զայն շաղախեց,  
Չողը ոգի զգեցաւ անմեռ,  
Դարձաւ նշխար սրբանուԷր...

.....

Անդաստանիդ մեջ գունագեղ,  
Մեղմ երանգ մը լոկ ես եղայ,  
Լոյսդ ցաթեց անոր վրայ,  
Չրավառեց երանգս հեզ...

.....

Ազնուութիւնն ես պաշտեցի՝  
ԳեղեցիկԷն շատ աւելի,



---

Յոգիի վեհ որակ է ան,

Որ կայծ մ'ունի արարչական..

.....

Ամեն մեկնող անվերադարձ՝ թողուց պարապ մը իր ետին,

Շող մ'արեգակ, խոհեր անգին, յոյզ-ապրումներ՝ համակ աշխարհ..

Ու դեռ կ'ըսենք թուրակաբար որ մարդը կը փոխարինուի

Եւ կը մոռնանք՝ տիեզե՛րք է ան, ամեն մեկը՝ անկրկնելի..

.....

Գարունն հեւաց, ամառ դարձաւ,

Ամառն հեւաց, հրաշունչ դարձաւ,

Դալուկ աշնան արցունքը թաց՝

Բերաւ ձմրան ձիւնը սպիտակ..

.....

Թէ անցեալէդ դուն միշտ կառչիս՝

Անցեալին մէջ ապրած կ'ըլլաս,

Ներկադ ու դեռ ապագադ ալ՝

Պիտ' կառուցուին դեռ նորովի:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ